

**Մասնագիտական
գործունեության միջազգային
ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ**

Պաշտոնական թարգմանություն



*Ներքին Աուդիտորների
Ինստիտուտ | Հայաստան*



**ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ (ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ)**

**INTERNATIONAL STANDARDS FOR THE
PROFESSIONAL PRACTICE OF INTERNAL
AUDITING (STANDARDS)**

<u>Բովանդակություն</u>	<u>Table of contents</u>
ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ	ATTRIBUTE STANDARDS
1000 – Նպատակ, Իրավասություն և Պատասխանատվություն	1000 – Purpose, Authority, and Responsibility
1010 – Ներքին աուդիտի կանոնադրությունում Ներքին աուդիտի սահմանման, Էթիկայի կանոնների և Ստանդարտների ճանաչում	1010 – Recognition of the Definition of Internal Auditing, the Code of Ethics, and the Standards in the Internal Audit Charter
1100 – Անկախություն և անաչառություն	1100 – Independence and Objectivity
1110 – Կազմակերպական անկախություն	1110 – Organizational Independence
1111 – Խորհրդի հետ անմիջական փոխհարաբերություն	1111 – Direct Interaction with the Board
1120 – Անհատական անաչառություն	1120 – Individual Objectivity
1130 – Անկախության կամ անաչառության խաթարում	1130 – Impairment to Independence or Objectivity
1200 – Հմտություն և մասնագիտական պատշաճ ուշադրություն	1200 – Proficiency and Due Professional Care
1210 – Հմտություն	1210 – Proficiency



Բովանդակություն	Table of contents
1220 – Մասնագիտական պատշաճ ուշադրություն	1220 – Due Professional Care
1230 – Շարունակական մասնագիտական զարգացում	1230 – Continuing Professional Development
1300 – Որակի երաշխավորման և բարելավման ծրագիր	1300 – Quality Assurance and Improvement Program
1310 – Որակի երաշխավորման և բարելավման ծրագրի պահանջներ	1310 – Requirements of the Quality Assurance and Improvement Program
1311 – Ներքին գնահատում	1311 – Internal Assessments
1312 – Արտաքին գնահատում	1312 – External Assessments
1320 – Որակի երաշխավորման և բարելավման ծրագրի հաշվետվողականություն	1320 – Reporting on the Quality Assurance and Improvement Program
1321 – “Համապատասխանում է ներքին աուդիտի մասնագիտական գործունեության միջազգային ստանդարտներին” արտահայտության օգտագործում	1321 – Use of “Conforms with the International Standards for the Professional Practice of Internal Auditing”
1322 – Անհամապատասխանության բացահայտում	1322 – Disclosure of Nonconformance



Բովանդակություն	Table of contents
ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ	PERFORMANCE STANDARDS
2000 – Ներքին աուդիտի գործառույթի կառավարում	2000 – Managing the Internal Audit Activity
2010 – Պլանավորում	2010 – Planning
2020 – Ներկայացում և հաստատում	2020 – Communication and Approval
2030 – Ռեսուրսների կառավարում	2030 – Resource Management
2040 – Քաղաքականություն և ընթացակարգեր	2040 – Policies and Procedures
2050 – Կոորդինացում	2050 – Coordination
2060 – Հաշվետվողականություն գործադիր ղեկավարությանն ու խորհրդին	2060 – Reporting to Senior Management and the Board
2070 – Արտաքին ծառայություն մատուցող և կազմակերպության պատասխանատվությունը ներքին աուդիտի համար	2070 – External Service Provider and Organizational Responsibility for Internal Auditing
2100 – Աշխատանքի էությունը	2100 – Nature of Work
2110 – Կորպորատիվ կառավարում	2110 – Governance
2120 – Ռիսկերի կառավարում	2120 – Risk Management



Բովանդակություն	Table of contents
2130 – Հսկողություն	2130 – Control
2200 – Հանձնառության պլանավորում	2200 – Engagement Planning
2201 – Պլանավորման նկատառումներ	2201 – Planning Considerations
2210 – Հանձնառության նպատակներ	2210 – Engagement Objectives
2220 – Հանձնառության շրջանակ	2220 – Engagement Scope
2230 – Հանձնառության ռեսուրսների բաշխում	2230 – Engagement Resource Allocation
2240 – Հանձնառության աշխատանքային ծրագիր	2240 – Engagement Work Program
2300 – Հանձնառության իրականացում	2300 – Performing the Engagement
2310 – Տեղեկատվության բացահայտում	2310 – Identifying Information
2320 – Վերլուծություն և գնահատում	2320 – Analysis and Evaluation
2330 – Տեղեկատվության փաստաթղթավորում	2330 – Documenting Information
2340 – Հանձնառության վերահսկում	2340 – Engagement Supervision
2400 – Արդյունքների ներկայացում	2400 – Communicating Results



Բովանդակություն	Table of contents
2410 – Ներկայացման չափանիշներ	2410 – Criteria for Communicating
2420 – Ներկայացման որակ	2420 – Quality of Communications
2421 – Սխալներ ու բացթողումներ	2421 – Errors and Omissions
2430 – “Իրականացվել է Ներքին աուդիտի մասնագիտական գործունեության միջազգային ստանդարտներին համապատասխան” արտահայտության կիրառում	2430 – Use of “Conducted in Conformance with the International Standards for the Professional Practice of Internal Auditing”
2431 – Հանձնառության անհամապատասխանության բացահայտում	2431 – Engagement Disclosure of Nonconformance
2440 – Արդյունքների տրամադրում	2440 – Disseminating Results
2450 – Ընդհանուր եզրակացություններ	2450 – Overall Opinions
2500 – Առաջընթացի մոնիտորինգ	2500 – Monitoring Progress
2600 – Ռիսկերի ընդունման վերաբերյալ իրազեկում	2600 – Communicating the Acceptance of Risks



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	INTRODUCTION TO THE INTERNATIONAL STANDARDS
<p>Ներքին աուդիտն իրականացվում է տարբեր իրավական և մշակութային միջավայրերում; կազմակերպություններում, որոնք տարբերվում են իրենց նպատակներով, չափերով, բարդությամբ ու կառուցվածքով; կազմակերպության աշխատակիցների կամ այլ անձանց կողմից: Չնայած նշված տարբերությունները կարող են ազդել ներքին աուդիտի գործելակերպի վրա յուրաքանչյուր միջավայրում, համապատասխանությունը Ներքին աուդիտի մասնագիտական գործունեության ստանդարտներին (այսուհետ՝ Ստանդարտներ) անհրաժեշտ է՝ ներքին աուդիտի գործառույթի և ներքին աուդիտորների պարտականությունների իրականացման համար:</p> <p>Եթե ներքին աուդիտորների կամ ներքին աուդիտի գործառույթի համապատասխանությունը Ստանդարտների որոշ մասերին օրենքով կամ այլ իրավական ակտերով արգելված է, ապա Ստանդարտների մնացած բոլոր մասերին համապատասխանության վերաբերյալ անհրաժեշտ է ներկայացնել պատշաճ բացահայտումներ:</p> <p>Եթե Ստանդարտները կիրառվում են այլ իրավասու մարմինների կողմից թողարկված ստանդարտների հետ համատեղ, ներքին աուդիտի հաշվետվություններում կարող է նշվել այլ ստանդարտների կիրառումը: Այս դեպքում, եթե առկա են հակասություններ Ստանդարտների և այլ ստանդարտների միջև,</p>	<p>Internal auditing is conducted in diverse legal and cultural environments; within organizations that vary in purpose, size, complexity, and structure; and by persons within or outside the organization. While differences may affect the practice of internal auditing in each environment, conformance with The IIA’s International Standards for the Professional Practice of Internal Auditing (Standards) is essential in meeting the responsibilities of internal auditors and the internal audit activity.</p> <p>If internal auditors or the internal audit activity is prohibited by law or regulation from conformance with certain parts of the Standards, conformance with all other parts of the Standards and appropriate disclosures are needed.</p> <p>If the <i>Standards</i> are used in conjunction with standards issued by other authoritative bodies, internal audit communications may also cite the use of other standards, as appropriate. In such a case, if inconsistencies exist between the <i>Standards</i> and other standards, internal auditors and the internal audit activity must conform with the</p>

Թարգմանությունը բոլոր էական առումներով համապատասխանում է բնօրինակին և հրապարակված է հեղինակային իրավունքի տիրապետող Ներքին Աուդիտորների Ինստիտուտի (247 Maitland Avenue, Altamonte Springs, Florida 32701-4201, USA) թույլտվությամբ:



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	INTRODUCTION TO THE INTERNATIONAL STANDARDS
<p>Ներքին աուդիտորները և ներքին աուդիտի գործառույթը պետք է համապատասխանեն Ստանդարտներին և կարող են համապատասխանել այլ ստանդարտներին, եթե դրանք ավելի խիստ են:</p> <p>Ստանդարտների նպատակն է՝</p> <ol style="list-style-type: none">1. նկարագրել այն հիմնադրույթները, որոնք ներկայացնում են ներքին աուդիտի գործունեությունը,2. տրամադրել ուղենիշեր ներքին աուդիտի արժեք ավելացնող գործառույթների լայն շրջանակի իրականացման և խթանման համար3. ստեղծել հիմքեր ներքին աուդիտի գործունեության գնահատման համար,4. խթանել կազմակերպչական գործընթացների և գործառույթների զարգացումը: <p>Ստանդարտները սկզբունքների վրա հիմնված պարտադիր պահանջներ են, որոնք բաղկացած են.</p> <ul style="list-style-type: none">• ներքին աուդիտի մասնագիտական գործունեության և դրա իրականացման արդյունավետության գնահատման հիմնական պահանջների սահմանումներից, որոնք միջազգայնորեն կիրառելի են կազմակերպչական և անհատական մակարդակներով	<p><i>Standards</i>, and may conform with the other standards if they are more restrictive.</p> <p>The purpose of the Standards is to:</p> <ol style="list-style-type: none">1. Delineate basic principles that represent the practice of internal auditing.2. Provide a framework for performing and promoting a broad range of value-added internal auditing.3. Establish the basis for the evaluation of internal audit performance.4. Foster improved organizational processes and operations. <p>The <i>Standards</i> are principles-focused, mandatory requirements consisting of:</p> <ul style="list-style-type: none">• Statements of basic requirements for the professional practice of internal auditing and for evaluating the effectiveness of performance, which are internationally applicable at organizational and individual levels.



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	INTRODUCTION TO THE INTERNATIONAL STANDARDS
<ul style="list-style-type: none"> մեկնաբանություններից, որոնք պարզաբանում են Սահմանումներում նշված տերմինները կամ գաղափարները: <p>Ստանդարտներում կիրառվում են տերմիններ, որոնք ունեն հատուկ նշանակություն և որոնք ներառված են Տերմինաբանության մեջ: Մասնավորապես՝ Ստանդարտներում “պետք է” բառը կիրառվում է անվերապահ պահանջի դեպքում, մինչդեռ “անհրաժեշտ է” բառը, երբ համապատասխանությունն ակնկալվում է՝ բացառությամբ դեպքերի, երբ մասնագիտական դատողություն կիրառելիս հանգամանքներն արդարացնում են շեղումը:</p> <p>Ստանդարտները ճիշտ ընկալելու և կիրառելու համար անհրաժեշտ է հաշվի առնել Սահմանումները և դրանց Մեկնաբանությունները, ինչպես նաև որոշ նշանակություններ Տերմինաբանությունից:</p> <p>Ստանդարտները կազմված են Բնութագրող և Գործառնական ստանդարտներից: Բնութագրող ստանդարտները վերաբերում են ներքին աուդիտ իրականացնող կազմակերպությունների և անձանց բնութագրերին: Գործառնական ստանդարտները նկարագրում են ներքին աուդիտի գործունեության էությունը և ապահովում որակական չափանիշներ, որոնցով այս ծառայությունների գործունեությունը կարող է գնահատվել: Բնութագրող և Գործառնական ստանդարտները վերաբերում են նաև ներքին աուդիտի բոլոր ծառայություններին:</p>	<ul style="list-style-type: none"> Interpretations, which clarify terms or concepts within the Statements. <p>The <i>Standards</i> employ terms that have been given specific meanings that are included in the Glossary. Specifically, the <i>Standards</i> use the word “must” to specify an unconditional requirement and the word “should” where conformance is expected unless, when applying professional judgment, circumstances justify deviation.</p> <p>It is necessary to consider the Statements and their Interpretations as well as the specific meanings from the Glossary to understand and apply the <i>Standards</i> correctly.</p> <p>The structure of the <i>Standards</i> is divided between Attribute and Performance Standards. Attribute Standards address the attributes of organizations and individuals performing internal auditing. The Performance Standards describe the nature of internal auditing and provide quality criteria against which the performance of these services can be measured. The Attribute and Performance Standards are also provided to apply to all internal audit services.</p>

Թարգմանությունը բոլոր էական առումներով համապատասխանում է բնօրինակին և հրապարակված է հեղինակային իրավունքի տիրապետող Ներքին Աուդիտորների Ինստիտուտի (247 Maitland Avenue, Altamonte Springs, Florida 32701-4201, USA) թույլտվությամբ:



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	INTRODUCTION TO THE INTERNATIONAL STANDARDS
<p>Կիրառական ստանդարտները տարածվում են Բնութագրող և Գործառնական ստանդարտների վրա՝ պահանջներ ներկայացնելով Հավաստիացման (Հ) և Խորհրդատվական (Խ) գործունեության նկատմամբ:</p> <p>Հավաստիացման ծառայությունները ներառում են ներքին աուդիտորի կողմից փաստերի անկողմնակալ գնահատման միջոցով որոշակի կազմակերպության, գործընթացի, գործառնության, համակարգի, գործառույթի կամ այլ օբյեկտի վերաբերյալ անկախ կարծիքի կամ եզրակացության տրամադրում: Հավաստիացման հանձնառության բնույթն ու շրջանակը որոշվում են ներքին աուդիտորի կողմից: Հավաստիացման ծառայություններում սովորաբար ներգրավված է երեք կողմ. (1) այն անձը կամ խումբը, որն ուղղակիորեն ներգրավված է տվյալ միավորում, գործընթացում, համակարգում, գործառույթում կամ դիտարկվող օբյեկտում՝ գործընթացի սեփականատերը, (2) այն անձը կամ խումբը, որն իրականացնում է գնահատումը՝ ներքին աուդիտորը և (3) այն անձը կամ խումբը, որն օգտագործում է այդ գնահատականը՝ օգտագործողը:</p> <p>Խորհրդատվական ծառայություններն իրենց բնույթով խորհրդակցական են և իրականացվում են հաճախորդի հատուկ հանձնարարությամբ: Խորհրդատվական հանձնառության բնույթն ու շրջանակը որոշվում են հաճախորդի հետ պայմանավորվածության հիման վրա: Խորհրդատվական ծառայությունները, որպես կանոն, ընդգրկում են երկու կողմ՝ (1) անձը կամ խումբը, որն առաջարկում է խորհրդատվությունը՝</p>	<p>Implementation Standards are also provided to expand upon the Attribute and Performance standards, by providing the requirements applicable to assurance (A) or consulting (C) activities.</p> <p>Assurance services involve the internal auditor’s objective assessment of evidence to provide an independent opinion or conclusions regarding an entity, operation, function, process, system, or other subject matter. The nature and scope of the assurance engagement are determined by the internal auditor. There are generally three parties involved in assurance services: (1) the person or group directly involved with the entity, operation, function, process, system, or other subject matter — the process owner, (2) the person or group making the assessment — the internal auditor, and (3) the person or group using the assessment — the user.</p> <p>Consulting services are advisory in nature, and are generally performed at the specific request of an engagement client. The nature and scope of the consulting engagement are subject to agreement with the engagement client. Consulting services generally involve two parties: (1) the person or group offering the advice — the internal auditor, and (2) the person or group seeking and receiving the advice</p>

Թարգմանությունը բոլոր էական առումներով համապատասխանում է բնօրինակին և հրապարակված է հեղինակային իրավունքի տիրապետող Ներքին Աուդիտորների Ինստիտուտի (247 Maitland Avenue, Altamonte Springs, Florida 32701-4201, USA) թույլտվությամբ:



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	INTRODUCTION TO THE INTERNATIONAL STANDARDS
<p>Ներքին աուդիտորը, և (2) անձը կամ խումբը, որը դիմում և ստանում է խորհրդատվությունը՝ հանձնառության հաճախորդը: Խորհրդատվական ծառայություններ իրականացնելիս ներքին աուդիտորը անհրաժեշտ է պահպանի իր անաչառությունը և իր վրա չվերցնի ղեկավարության պատասխանատվություն:</p> <p>Ստանդարտները տարածվում են թե առանձին ներքին աուդիտորների և թե ներքին աուդիտի գործունեության վրա: Բոլոր ներքին աուդիտորները պատասխանատու են անհատական անաչառությունը, փորձառությանն ու մասնագիտական պատշաճ ուշադրությանը վերաբերող Ստանդարտներին հետևելու համար: Բացի այդ, ներքին աուդիտորները պատասխանատու են իրենց աշխատանքային պարտականությունների կատարմանը վերաբերող Ստանդարտներին հետևելու համար: Ներքին աուդիտի ղեկավարը պատասխանատու է Ստանդարտներին ընդհանուր առմամբ համապատասխանության ապահովման համար:</p> <p>Ստանդարտների վերանայումն ու մշակումը շարունակական գործընթաց է: Ներքին աուդիտի ստանդարտների միջազգային խորհուրդն իրականացնում է լայնածավալ քննարկումներ և խորհրդակցություններ նախքան Ստանդարտների թողարկումը: Սա ներառում է աշխարհով մեկ հասարակական կարծիքի հավաքագրում նախագծային գործընթացի միջոցով: Բոլոր նախագծերը տեղադրվում են ՆԱԻ կայքում, ինչպես նաև տրամադրվում են բոլոր ՆԱԻ ինստիտուտներին:</p>	<p>— the engagement client. When performing consulting services the internal auditor should maintain objectivity and not assume management responsibility.</p> <p>The Standards apply to individual internal auditors and internal audit activities. All internal auditors are accountable for conforming with the Standards related to individual objectivity, proficiency, and due professional care. In addition, internal auditors are accountable for conforming with the Standards, which are relevant to the performance of their job responsibilities. Chief audit executives are accountable for overall conformance with the Standards.</p> <p>The review and development of the <i>Standards</i> is an ongoing process. The International Internal Audit Standards Board engages in extensive consultation and discussion prior to issuing the <i>Standards</i>. This includes worldwide solicitation for public comment through the exposure draft process. All exposure drafts are posted on The IIA’s Web site as well as being distributed to all IIA institutes.</p>



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	INTRODUCTION TO THE INTERNATIONAL STANDARDS
<p>Ստանդարտների վերաբերյալ առաջարկներն ու մեկնաբանությունները կարելի է ուղարկել հետևյալ հասցեով.</p> <p>The Institute of Internal Auditors Standards and Guidance 247 Maitland Avenue Altamonte Springs, FL 32701-4201, USA</p> <p>Էլ. հասցե՝ guidance@theiia.org Կայք՝ www.globaliia.org</p>	<p>Suggestions and comments regarding the <i>Standards</i> can be sent to:</p> <p>The Institute of Internal Auditors Standards and Guidance 247 Maitland Avenue Altamonte Springs, FL 32701-4201, USA</p> <p>E-mail: guidance@theiia.org Web:www.globaliia.org</p>



ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ	ATTRIBUTE STANDARDS
<p>1000 – Նպատակ, Իրավասություն և Պատասխանատվություն</p> <p>Ներքին աուդիտի գործառույթի նպատակը, իրավասություններն ու պատասխանատվությունը պետք է ֆորմալ սահմանված լինեն ներքին աուդիտի կանոնադրությամբ և համահունչ լինեն Ներքին աուդիտի Սահմանմանը, Էթիկայի կանոններին և Ստանդարտներին: Ներքին աուդիտի ղեկավարը պետք է պարբերաբար վերանայի ներքին աուդիտի կանոնադրությունը և ներկայացնի այն գործադիր ղեկավարության ու Խորհրդի հաստատմանը:</p> <p>Մեկնաբանություն</p> <p>Ներքին աուդիտի կանոնադրությունը ֆորմալ փաստաթուղթ է, որը սահմանում է ներքին աուդիտի գործառույթի նպատակը, իրավասություններն ու պատասխանատվությունը: Ներքին աուդիտի կանոնադրությունը սահմանում է ներքին աուդիտի դիրքը կազմակերպության ներսում՝ ներառյալ ներքին աուդիտի ղեկավարի ֆունկցիոնալ հաշվետվողականության բնույթը Խորհրդին; ապահովում է հանձնառությանը վերաբերող փաստաթղթերի, անձնակազմի և ֆիզիկական գույքի հասանելիությունը, սահմանում է ներքին աուդիտի գործունեության շրջանակները: Ներքին աուդիտի կանոնադրության վերջնական հաստատողը Խորհուրդն է:</p>	<p>1000 – Purpose, Authority, and Responsibility</p> <p>The purpose, authority, and responsibility of the internal audit activity must be formally defined in an internal audit charter, consistent with the Definition of Internal Auditing, the Code of Ethics, and the <i>Standards</i>. The chief audit executive must periodically review the internal audit charter and present it to senior management and the board for approval.</p> <p>Interpretation:</p> <p><i>The internal audit charter is a formal document that defines the internal audit activity's purpose, authority, and responsibility. The internal audit charter establishes the internal audit activity's position within the organization, including the nature of the chief audit executive's functional reporting relationship with the board; authorizes access to records, personnel, and physical properties relevant to the performance of engagements; and defines the scope of internal audit activities. Final approval of the internal audit charter resides with the board.</i></p>

Թարգմանությունը բոլոր էական առումներով համապատասխանում է բնօրինակին և հրապարակված է հեղինակային իրավունքի տիրապետող Ներքին Աուդիտորների Ինստիտուտի (247 Maitland Avenue, Altamonte Springs, Florida 32701-4201, USA) թույլտվությամբ:



ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ	ATTRIBUTE STANDARDS
<p>1000.Հ1 – Կազմակերպությանը մատուցվող հավաստիացման ծառայությունների բնույթը պետք է սահմանված լինի ներքին աուդիտի կանոնադրությամբ: Եթե հավաստիացման ծառայությունները պետք է մատուցվեն կազմակերպությունից դուրս գտնվող կողմերին, ապա դրանց բնույթը նույնպես պետք է սահմանված լինի ներքին աուդիտի կանոնադրությամբ:</p> <p>1000.Խ1 – Խորհրդատվական ծառայությունների բնույթը պետք է սահմանված լինի ներքին աուդիտի կանոնադրությամբ:</p> <p>1010 – Ներքին աուդիտի կանոնադրությունում Ներքին աուդիտի սահմանման, Էթիկայի կանոնների և Ստանդարտների ճանաչում</p> <p>Ներքին աուդիտի սահմանման, Էթիկայի կանոնների և Ստանդարտների պարտադիր բնույթը պետք է ամրագրված լինի ներքին աուդիտի կանոնադրությունում: Ներքին աուդիտի ղեկավարը անհրաժեշտ է քննարկի Ներքին աուդիտի սահմանումը, Էթիկայի կանոնները և Ստանդարտները գործադիր ղեկավարության ու Խորհրդի հետ:</p>	<p>1000.A1 – The nature of assurance services provided to the organization must be defined in the internal audit charter. If assurances are to be provided to parties outside the organization, the nature of these assurances must also be defined in the internal audit charter.</p> <p>1000.C1 – The nature of consulting services must be defined in the internal audit charter.</p> <p>1010 – Recognition of the Definition of Internal Auditing, the Code of Ethics, and the Standards in the Internal Audit Charter</p> <p>The mandatory nature of the Definition of Internal Auditing, the Code of Ethics, and the <i>Standards</i> must be recognized in the internal audit charter. The chief audit executive should discuss the Definition of Internal Auditing, the Code of Ethics, and the <i>Standards</i> with senior management and the board.</p>



ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ	ATTRIBUTE STANDARDS
<p>1100 – Անկախություն և անաչառություն</p> <p>Ներքին աուդիտի գործառույթը պետք է լինի անկախ, իսկ ներքին աուդիտորները՝ անաչառ, իրենց աշխատանքը կատարելիս:</p> <p>Մեկնաբանություն</p> <p><i>Անկախությունը ազատությունն է այնպիսի պայմաններից, որոնք սպառնում են ներքին աուդիտի գործառույթին անկողմնակալ իրականացնել իր պարտականությունները: Ներքին աուդիտի գործունեության պարտականություններն արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ անկախության մակարդակին հասնելու համար ներքին աուդիտի ղեկավարն ունի անմիջական և անսահմանափակ հասանելիություն գործադիր ղեկավարությանն ու խորհրդին: Վերջինս հնարավոր է կրկնակի հաշվեքվողական հարաբերությունների միջոցով: Անկախության սպառնալիքները պետք է կառավարվեն յուրաքանչյուր աուդիտորի, հանձնառության, ֆունկցիոնալ և կազմակերպական մակարդակներում:</i></p> <p><i>Անաչառությունը անկողմնակալ վերաբերմունքի դրսևորում է, որը թույլ է տալիս ներքին աուդիտորներին իրականացնել հանձնառություններն այնպես, որ նրանք վստահեն իրենց աշխատանքի արդյունքին, և որակի վերաբերյալ փոխզիջումներ չիրականացնեն:</i></p>	<p>1100 – Independence and Objectivity</p> <p>The internal audit activity must be independent, and internal auditors must be objective in performing their work.</p> <p>Interpretation:</p> <p><i>Independence is the freedom from conditions that threaten the ability of the internal audit activity to carry out internal audit responsibilities in an unbiased manner. To achieve the degree of independence necessary to effectively carry out the responsibilities of the internal audit activity, the chief audit executive has direct and unrestricted access to senior management and the board. This can be achieved through a dual-reporting relationship. Threats to independence must be managed at the individual auditor, engagement, functional, and organizational levels.</i></p> <p><i>Objectivity is an unbiased mental attitude that allows internal auditors to perform engagements in such a manner that they believe in their work product and that no quality compromises are made.</i></p>

Թարգմանությունը բոլոր էական առումներով համապատասխանում է բնօրինակին և հրապարակված է հեղինակային իրավունքի տիրապետող Ներքին Աուդիտորների Ինստիտուտի (247 Maitland Avenue, Altamonte Springs, Florida 32701-4201, USA) թույլտվությամբ:



ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ	ATTRIBUTE STANDARDS
<p>Անաշատությունը պահանջում է, որ ներքին աուդիտորները աուդիտորական խնդիրների վերաբերյալ իրենց դատողությունները չստորադասեն այլոց: Անաշատության սպառնալիքները պետք է կառավարվեն յուրաքանչյուր աուդիտորի, հանձնառության, ֆունկցիոնալ և կազմակերպական մակարդակներում:</p> <p>1110 – Կազմակերպական անկախություն</p> <p>Ներքին աուդիտի ղեկավարը պետք է հաշվետու լինի կազմակերպության այն օղակին, որը թույլ կտա ներքին աուդիտի գործառնությունները իրականացնել իր պարտականությունները: Ներքին աուդիտի ղեկավարը, առնվազն տարին մեկ անգամ, պետք է ներքին աուդիտի գործառնության կազմակերպական անկախությունը հաստատի Խորհրդին:</p> <p>Մեկնաբանություն</p> <p>Կազմակերպական անկախությունն արդյունավետորեն ապահովվում է, երբ ներքին աուդիտի ղեկավարը ֆունկցիոնալ առումով հաշվետու է խորհրդին: Խորհրդին ներկայացվող ֆունկցիոնալ հաշվետվողականության օրինակները ներառում են՝ խորհրդի կողմից:</p>	<p><i>Objectivity requires that internal auditors do not subordinate their judgment on audit matters to others.</i></p> <p><i>Threats to objectivity must be managed at the individual auditor, engagement, functional, and organizational levels.</i></p> <p>1110 – Organizational Independence</p> <p>The chief audit executive must report to a level within the organization that allows the internal audit activity to fulfill its responsibilities. The chief audit executive must confirm to the board, at least annually, the organizational independence of the internal audit activity.</p> <p>Interpretation:</p> <p><i>Organizational independence is effectively achieved when the chief audit executive reports functionally to the board. Examples of functional reporting to the board involve the board:</i></p>



ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ	ATTRIBUTE STANDARDS
<ul style="list-style-type: none"> • ներքին աուդիտի կանոնադրության հաստատումը, • ռիսկերի վրա հիմնված ներքին աուդիտի ծրագրի հաստատումը, • ներքին աուդիտի բյուջեի և ռեսուրսների ծրագրի հաստատումը, • ներքին աուդիտի ղեկավարի կողմից ներքին աուդիտի ծրագրի կատարողականի և այլ դրույթների վերաբերյալ հաշվետվությունների ստացումը, • ներքին աուդիտի ղեկավարի նշանակման և ազատման որոշումների հաստատումը, • ներքին աուդիտի ղեկավարի վարձատրության հաստատումը և • շրջանակների կամ ռեսուրսների անհարկի սահմանափակումների վերաբերյալ ղեկավարությանն ու ներքին աուդիտի ղեկավարին համապատասխան հարցումների իրականացումը: <p>1110.Հ1 – Ներքին աուդիտի գործառույթը իր հանձնառությունների շրջանակները որոշելիս, իրականացնելիս և արդյունքները ներկայացնելիս պետք է զերծ լինի միջամտությունից:</p>	<ul style="list-style-type: none"> • <i>Approving the internal audit charter;</i> • <i>Approving the risk based internal audit plan;</i> • <i>Approving the internal audit budget and resource plan;</i> • <i>Receiving communications from the chief audit executive on the internal audit activity’s performance relative to its plan and other matters;</i> • <i>Approving decisions regarding the appointment and removal of the chief audit executive;</i> • <i>Approving the remuneration of the chief audit executive; and</i> • <i>Making appropriate inquiries of management and the chief audit executive to determine whether there are inappropriate scope or resource limitations.</i> <p>1110.A1 – The internal audit activity must be free from interference in determining the scope of internal auditing, performing work, and communicating results.</p>



ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ	ATTRIBUTE STANDARDS
<p>1111 – Խորհրդի հետ անմիջական փոխհարաբերություն</p> <p>Ներքին աուդիտի ղեկավարը պետք է անմիջականորեն իրազեկի և համագործակցի Խորհրդի հետ:</p> <p>1120 – Անհատական անաչառություն</p> <p>Ներքին աուդիտորները պետք է ունենան անկողմնակալ, անաչառ վերաբերմունք և խուսափեն ցանկացած շահերի բախումից:</p> <p>Մեկնաբանություն</p> <p>Շահերի բախումն այնպիսի իրավիճակ է, երբ ներքին աուդիտորը, ում վստահված է հանձնառությունը, ունի մասնագիտական (պաշտոնական) կամ անձնական շահերի բախում: Նման հակասական շահերը կարող են դժվարություն ստեղծել աուդիտորի պարտականությունների անաչառ կատարման համար: Շահերի բախումն առկա է նույնիսկ այն դեպքում, երբ տեղի չի ունենում վարքագծի կանոնների խախտում կամ ոչ պատշաճ գործողություն: Շահերի բախումը կարող է ստեղծել անճշտության տպավորություն, որը կարող է խաթարել վստահությունը ներքին աուդիտորի, ներքին աուդիտի գործառույթի և մասնագիտության նկատմամբ: Շահերի բախումը կարող է խաթարել անձին անաչառ կատարել իր պարտականությունները:</p>	<p>1111 – Direct Interaction with the Board</p> <p>The chief audit executive must communicate and interact directly with the board.</p> <p>1120 – Individual Objectivity</p> <p>Internal auditors must have an impartial, unbiased attitude and avoid any conflict of interest.</p> <p>Interpretation:</p> <p><i>Conflict of interest is a situation in which an internal auditor, who is in a position of trust, has a competing professional or personal interest. Such competing interests can make it difficult to fulfill his or her duties impartially. A conflict of interest exists even if no unethical or improper act results. A conflict of interest can create an appearance of impropriety that can undermine confidence in the internal auditor, the internal audit activity, and the profession. A conflict of interest could impair an individual's ability to perform his or her duties and responsibilities objectively.</i></p>



ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ	ATTRIBUTE STANDARDS
<p>1130 – Անկախության կամ անաչառության խաթարում</p> <p>Եթե անկախությունը կամ անաչառությունը փաստացի կամ ենթադրաբար խաթարվել է, ապա խաթարման մանրամասները պետք է ներկայացվեն համապատասխան կողմերին: Ներկայացման եղանակը կախված է խաթարման բնույթից:</p> <p>Մեկնաբանություն</p> <p>Կազմակերպական անկախության և անձի անաչառության խաթարումը կարող է ներառել անձնական շահերի բախումը, շրջանակների սահմանափակումը, փաստաթղթերի, անձնակազմի, գույքի և միջոցների անհասանելիությունը, սակայն չի սահմանափակվում թվարկվածներով:</p> <p>Համապատասխան կողմերի սահմանումը, ում պետք է տրամադրվեն անկախության կամ անաչառության խաթարման մանրամասները, կախված է գործադիր ղեկավարության ու խորհրդի նկատմամբ ներքին աուդիտի գործունեության և ներքին աուդիտի ղեկավարի պատասխանատվությունից, ինչը նկարագրված է ներքին աուդիտի կանոնադրության մեջ, ինչպես նաև խաթարման բնույթից:</p>	<p>1130 – Impairment to Independence or Objectivity</p> <p>If independence or objectivity is impaired in fact or appearance, the details of the impairment must be disclosed to appropriate parties. The nature of the disclosure will depend upon the impairment.</p> <p>Interpretation:</p> <p><i>Impairment to organizational independence and individual objectivity may include, but is not limited to, personal conflict of interest, scope limitations, restrictions on access to records, personnel, and properties, and resource limitations, such as funding.</i></p> <p><i>The determination of appropriate parties to which the details of an impairment to independence or objectivity must be disclosed is dependent upon the expectations of the internal audit activity’s and the chief audit executive’s responsibilities to senior management and the board as described in the internal audit charter, as well as the nature of the impairment.</i></p>



ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ	ATTRIBUTE STANDARDS
<p>1130.Հ1 – Ներքին աուդիտորները պետք է զերծ մնան այնպիսի գործառույթների գնահատումից, որոնց համար նախկինում կրել են պատասխանատվություն: Անաչառությունը համարվում է վտանգված, եթե ներքին աուդիտորը հավաստիացման ծառայություն է մատուցում մի գործունեության համար, որի համար կրել է պատասխանատվություն նախորդ տարվա ընթացքում:</p> <p>1130.Հ2 – Ներքին աուդիտի ղեկավարի պատասխանատվության ներքո գտնվող գործառույթների հետ կապված հավաստիացման հանձնառությունները պետք է վերահսկվեն ներքին աուդիտի ծառայությունից դուրս գտնվող անձի կողմից:</p> <p>1130.Խ1 – Ներքին աուդիտորները կարող են մատուցել խորհրդատվական ծառայություններ այն գործառնությունների համար, որոնց համար նախկինում կրել են պատասխանատվություն:</p> <p>1130.Խ2 – Եթե ներքին աուդիտորներն առաջարկվող խորհրդատվական ծառայությունների հետ կապված ունեն անկախության կամ անաչառություն պոտենցիալ խաթարումներ, ապա, նախքան հանձնառության ընդունումը, այդ հանգամանքը պետք է ներկայացվի հաճախորդին:</p>	<p>1130.A1 – Internal auditors must refrain from assessing specific operations for which they were previously responsible. Objectivity is presumed to be impaired if an internal auditor provides assurance services for an activity for which the internal auditor had responsibility within the previous year.</p> <p>1130.A2 – Assurance engagements for functions over which the chief audit executive has responsibility must be overseen by a party outside the internal audit activity.</p> <p>1130.C1 – Internal auditors may provide consulting services relating to operations for which they had previous responsibilities.</p> <p>1130.C2 – If internal auditors have potential impairments to independence or objectivity relating to proposed consulting services, disclosure must be made to the engagement client prior to accepting the engagement.</p>



ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ	ATTRIBUTE STANDARDS
<p>1200 – Հմտություն և մասնագիտական պատշաճ ուշադրություն</p> <p>Հանձնառությունները պետք է իրականացվեն հմտորեն և մասնագիտական պատշաճ ուշադրությամբ:</p> <p>1210 – Հմտություն</p> <p>Ներքին աուդիտորները պետք է ունենան գիտելիք, հմտություններ և այլ պահանջվող ունակություններ՝ իրենց հանձնառություններն իրականացնելու համար: Ներքին աուդիտի գործառույթը միասնական պետք է ունենա կամ ձեռք բերի իր պարտականությունների իրականացման համար անհրաժեշտ գիտելիք, հմտություններ կամ այլ ունակություններ:</p> <p>Մեկնաբանություն</p> <p><i>Գիտելիք, հմտություններ և այլ ունակությունները մասնագիտական փորձառությանը վերաբերող հավաքական տերմին է, որը պահանջվում է ներքին աուդիտորներից՝ իրենց մասնագիտական պարտականություններն արդյունավետորեն իրականացնելու համար: Ներքին աուդիտորները խրախուսվում են դրսևորել իրենց փորձառությունը համապատասխան մասնագիտական հավաստագրերի և որակավորումների ձեռքբերման միջոցով, ինչպիսիք են Որակավորված Ներքին Աուդիտոր հավաստագիրը և</i></p>	<p>1200 – Proficiency and Due Professional Care</p> <p>Engagements must be performed with proficiency and due professional care.</p> <p>1210 – Proficiency</p> <p>Internal auditors must possess the knowledge, skills, and other competencies needed to perform their individual responsibilities. The internal audit activity collectively must possess or obtain the knowledge, skills, and other competencies needed to perform its responsibilities.</p> <p>Interpretation:</p> <p><i>Knowledge, skills, and other competencies is a collective term that refers to the professional proficiency required of internal auditors to effectively carry out their professional responsibilities. Internal auditors are encouraged to demonstrate their proficiency by obtaining appropriate professional certifications and qualifications, such as the Certified Internal Auditor designation and other designations offered by The Institute of Internal Auditors and other appropriate professional organizations.</i></p>

Թարգմանությունը բոլոր էական առումներով համապատասխանում է բնօրինակին և հրապարակված է հեղինակային իրավունքի տիրապետող Ներքին Աուդիտորների Ինստիտուտի (247 Maitland Avenue, Altamonte Springs, Florida 32701-4201, USA) թույլտվությամբ:



ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ	ATTRIBUTE STANDARDS
<p><i>Ներքին աուդիտորների ինստիտուտի և այլ համապատասխան մասնագիտական կազմակերպությունների կողմից առաջարկվող այլ որակավորումները:</i></p> <p>1210.Հ1 – Եթե ներքին աուդիտորներն ունեն հանձնառությունն ամբողջովին կամ մասամբ իրականացնելու համար անհրաժեշտ գիտելիքի, հմտության կամ այլ ունակության պակաս, ներքին աուդիտի ղեկավարը պետք է ձեռքբերի համապատասխան կոմպետենտ խորհրդատվություն կամ օժանդակություն:</p> <p>1210.Հ2 – Ներքին աուդիտորները պետք է ունենան բավարար գիտելիք՝ խարդախության ռիսկը և կազմակերպության կողմից այն կառավարելու փորձը գնահատելու համար, սակայն պարտավոր չեն ունենալ խարդախության բացահայտման և ուսումնասիրման համար առաջնային պատասխանատվություն կրող անձի փորձառություն:</p> <p>1210.Հ3 – Ներքին աուդիտորները պետք է ունենան տեղեկատվական տեխնոլոգիաների առանցքային ռիսկերի և հսկողությունների, ինչպես նաև աշխատանքների իրականացման համար հասանելի աուդիտի տեխնոլոգիական միջոցների վերաբերյալ բավարար գիտելիք: Այնուհանդերձ, ոչ բոլոր ներքին աուդիտորները պետք է ունենան տեղեկատվական</p>	<p>1210.A1 – The chief audit executive must obtain competent advice and assistance if the internal auditors lack the knowledge, skills, or other competencies needed to perform all or part of the engagement.</p> <p>1210.A2 – Internal auditors must have sufficient knowledge to evaluate the risk of fraud and the manner in which it is managed by the organization, but are not expected to have the expertise of a person whose primary responsibility is detecting and investigating fraud.</p> <p>1210.A3 – Internal auditors must have sufficient knowledge of key information technology risks and controls and available technology-based audit techniques to perform their assigned work. However, not all internal auditors are expected to have the expertise of an internal auditor whose primary responsibility is information technology auditing.</p>



ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ	ATTRIBUTE STANDARDS
<p>տեխնոլոգիաների աուդիտի իրականացման համար առաջնային պատասխանատվություն կրող անձի փորձառություն:</p> <p>1210.Խ1 – Ներքին աուդիտի ղեկավարը պետք է հրաժարվի խորհրդատվական հանձնառության իրականացումից կամ ձեռք բերի կոմպետենտ խորհրդատվություն և օժանդակություն, եթե ներքին աուդիտորները ունեն հանձնառությունն ամբողջությամբ կամ մասնակիորեն իրականացնելու համար անհրաժեշտ գիտելիքի, հմտությունների կամ այլ ունակությունների պակաս:</p> <p>1220 – Մասնագիտական պատշաճ ուշադրություն</p> <p>Ներքին աուդիտորները պետք է ցուցաբերեն շրջահայաց ու իրազեկ ներքին աուդիտորին հարիր ուշադրություն և հմտություն: Մասնագիտական պատշաճ ուշադրությունը չի ենթադրում անսխալականություն:</p> <p>1220.Հ1 – Ներքին աուդիտորները պետք է դրսևորեն մասնագիտական պատշաճ ուշադրություն՝ հաշվի առնելով.</p> <ul style="list-style-type: none"> • հանձնառության նպատակներն իրագործելու համար անհրաժեշտ աշխատանքների ծավալը, • դեպքերի հարաբերական բարդությունը, էականությունը կամ կարևորությունը, որոնց նկատմամբ կիրառվելու են հավաստիացման ընթացակարգերը, 	<p>1210.C1 – The chief audit executive must decline the consulting engagement or obtain competent advice and assistance if the internal auditors lack the knowledge, skills, or other competencies needed to perform all or part of the engagement.</p> <p>1220 – Due Professional Care</p> <p>Internal auditors must apply the care and skill expected of a reasonably prudent and competent internal auditor. Due professional care does not imply infallibility.</p> <p>1220.A1 – Internal auditors must exercise due professional care by considering the:</p> <ul style="list-style-type: none"> • Extent of work needed to achieve the engagement’s objectives; • Relative complexity, materiality, or significance of matters to which assurance procedures are applied;

Թարգմանությունը բոլոր էական առումներով համապատասխանում է բնօրինակին և հրապարակված է հեղինակային իրավունքի տիրապետող Ներքին Աուդիտորների Ինստիտուտի (247 Maitland Avenue, Altamonte Springs, Florida 32701-4201, USA) թույլտվությամբ:



ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ	ATTRIBUTE STANDARDS
<ul style="list-style-type: none"> • կորպորատիվ կառավարման, ռիսկերի կառավարման և հսկողական գործընթացների համարժեքությունն ու արդյունավետությունը, • էական սխալների, խարդախության կամ անհամապատասխանության հավանականությունը և • հավանական օգուտների հետ համեմատ հավաստիացման արժեքը: <p>1220.Կ2 – Մասնագիտական պատշաճ ուշադրություն դրսևորելիս ներքին աուդիտորները պետք է հաշվի առնեն աուդիտի տեխնոլոգիական միջոցները և տվյալների վերլուծության այլ հնարքները:</p> <p>1220.Կ3 – Ներքին աուդիտորները պետք է զգոն լինեն էական ռիսկերի հանդեպ, որոնք կարող են ազդել նպատակների, գործառնությունների կամ ռեսուրսների վրա: Այնուամենայնիվ, միայն հավաստիացման ընթացակարգերը, նույնիսկ եթե իրականացվում են մասնագիտական պատշաճ ուշադրությամբ, չեն երաշխավորում էական բոլոր ռիսկերի բացահայտումը:</p> <p>1220.Խ1 – Ներքին աուդիտորները խորհրդատվական հանձնառության ընթացքում պետք է դրսևորեն մասնագիտական պատշաճ ուշադրություն՝ հաշվի առնելով.</p>	<ul style="list-style-type: none"> • Adequacy and effectiveness of governance, risk management, and control processes; • Probability of significant errors, fraud, or noncompliance; and • Cost of assurance in relation to potential benefits. <p>1220.A2 – In exercising due professional care internal auditors must consider the use of technology-based audit and other data analysis techniques.</p> <p>1220.A3 – Internal auditors must be alert to the significant risks that might affect objectives, operations, or resources. However, assurance procedures alone, even when performed with due professional care, do not guarantee that all significant risks will be identified.</p> <p>1220.C1 – Internal auditors must exercise due professional care during a consulting engagement by considering the:</p>



<p align="center">ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՍՏԱՆԴԱՐՆԵՐ</p>	<p align="center">ATTRIBUTE STANDARDS</p>
<ul style="list-style-type: none"> • հաճախորդների կարիքներն ու ակնկալիքները՝ ներառյալ հանձնառության բնույթը, տևողությունը և արդյունքների ներկայացումը, • հանձնառության նպատակներն իրագործելու համար պահանջվող աշխատանքների հարաբերական բարդությունն ու ծավալը, • հավանական օգուտների հետ համեմատ խորհրդատվական հանձնառության արժեքը : <p>1230 – Շարունակական մասնագիտական զարգացում</p> <p>Ներքին աուդիտորները մասնագիտական շարունակական զարգացման միջոցով պետք է կատարելագործեն իրենց գիտելիքները, հմտությունները, և այլ ունակությունները:</p> <p>1300 – Որակի երաշխավորման և բարելավման ծրագիր</p> <p>Ներքին աուդիտի ղեկավարը պետք է մշակի և կիրառի որակի երաշխավորման և բարելավման ծրագիր, որը կներառի ներքին աուդիտի գործունեության բոլոր ոլորտները:</p>	<ul style="list-style-type: none"> • Needs and expectations of clients, including the nature, timing, and communication of engagement results; • Relative complexity and extent of work needed to achieve the engagement’s objectives; and • Cost of the consulting engagement in relation to potential benefits. <p>1230 – Continuing Professional Development</p> <p>Internal auditors must enhance their knowledge, skills, and other competencies through continuing professional development.</p> <p>1300 – Quality Assurance and Improvement Program</p> <p>The chief audit executive must develop and maintain a quality assurance and improvement program that covers all aspects of the internal audit activity.</p>



ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ	ATTRIBUTE STANDARDS
<p>Մեկնաբանություն</p> <p>Որակի երաշխավորման և բարելավման ծրագիրը ստեղծված է Ներքին աուդիտի սահմանմանն ու Ստանդարտներին ներքին աուդիտի գործունեության համապատասխանությունը, ինչպես նաև ներքին աուդիտորների կողմից էթիկայի կանոնների կիրառումը գնահատելու համար: Ծրագիրը նաև գնահատում է ներքին աուդիտի գործառույթի արդյունավետությունն ու նպատակայնությունը և բացահայտում է բարելավման հնարավորությունները:</p> <p>1310 – Որակի երաշխավորման և բարելավման ծրագրի պահանջներ</p> <p>Որակի երաշխավորման ու բարելավման ծրագիրը պետք է ներառի և ներքին և արտաքին գնահատումներ:</p> <p>1311 – Ներքին գնահատում</p> <p>Ներքին գնահատումները պետք է ներառեն.</p> <ul style="list-style-type: none"> • ներքին աուդիտի գործունեության շարունակական մոնիտորինգը, 	<p>Interpretation:</p> <p><i>A quality assurance and improvement program is designed to enable an evaluation of the internal audit activity’s conformance with the Definition of Internal Auditing and the Standards and an evaluation of whether internal auditors apply the Code of Ethics. The program also assesses the efficiency and effectiveness of the internal audit activity and identifies opportunities for improvement.</i></p> <p>1310 – Requirements of the Quality Assurance and Improvement Program</p> <p>The quality assurance and improvement program must include both internal and external assessments.</p> <p>1311 – Internal Assessments</p> <p>Internal assessments must include:</p> <ul style="list-style-type: none"> • Ongoing monitoring of the performance of the internal audit activity; and



ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ	ATTRIBUTE STANDARDS
<ul style="list-style-type: none"> • պարբերական ինքնագնահատումները կամ կազմակերպության ներսում ներքին աուդիտի բավարար գիտելիքներ ունեցող այլ անձանց կողմից գնահատումները: <p>Մեկնաբանություն</p> <p>Շարունակական մոնիտորինգը կազմում է ներքին աուդիտի գործունեության ամենօրյա հսկողության, վերանայման ու գնահատման մասը: Այն ներառված է ներքին աուդիտի կառավարման քաղաքականություններում ու կարգերում և օգտագործում է անհրաժեշտ գործընթացներ, գործիքներ ու տեղեկատվություն՝ Ներքին աուդիտի սահմանմանը, էթիկայի կանոններին ու Սրանդարտներին համապատասխանությունը գնահատելու համար:</p> <p>Պարբերական գնահատումներն իրականացվում են Ներքին աուդիտի սահմանմանը, էթիկայի կանոններին ու Սրանդարտներին համապատասխանության գնահատման նպատակով:</p> <p>Ներքին աուդիտի գործունեության բավարար գիտելիքը պահանջում է առնվազն Մասնագիտական գործունեության միջազգային հայեցակարգի բոլոր տարրերի իմացություն:</p>	<ul style="list-style-type: none"> • Periodic self-assessments or assessments by other persons within the organization with sufficient knowledge of internal audit practices. <p>Interpretation:</p> <p><i>Ongoing monitoring is an integral part of the day-to-day supervision, review, and measurement of the internal audit activity. Ongoing monitoring is incorporated into the routine policies and practices used to manage the internal audit activity and uses processes, tools, and information considered necessary to evaluate conformance with the Definition of Internal Auditing, the Code of Ethics, and the Standards.</i></p> <p><i>Periodic assessments are conducted to evaluate conformance with the Definition of Internal Auditing, the Code of Ethics, and the Standards.</i></p> <p><i>Sufficient knowledge of internal audit practices requires at least an understanding of all elements of the International Professional Practices Framework.</i></p>



ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ	ATTRIBUTE STANDARDS
<p>1312 – Արտաքին գնահատում</p> <p>Արտաքին գնահատումները պետք է իրականացվեն կազմակերպությունից դուրս գտնվող որակավորված, անկախ գնահատողի կամ գնահատող թիմի կողմից առնվազն հինգ տարին մեկ: Ներքին աուդիտի ղեկավարը խորհրդի հետ պետք է քննարկի.</p>	<p>1312 - External Assessments</p> <p>External assessments must be conducted at least once every five years by a qualified, independent assessor or assessment team from outside the organization. The chief audit executive must discuss with the board:</p>
<ul style="list-style-type: none"> • արտաքին գնահատումների ձևն ու հաճախությունը և • արտաքին գնահատողի կամ գնահատող թիմի որակավորումն ու անկախությունը՝ ներառյալ հնարավոր շահերի բախումը: <p>Մեկնաբանություն</p> <p><i>Արտաքին գնահատումները կարող են լինել ամբողջական արտաքին գնահատման կամ անկախ արտաքին վավերացմամբ ինքնագնահատման տեսքով:</i></p> <p><i>Որակավորված գնահատողը կամ գնահատող թիմը հմտություն է դրսևորում երկու ոլորտներում՝ ներքին աուդիտի մասնագիտական փորձում և արտաքին գնահատման գործընթացում: Հմտությունը կարող է դրսևորվել փորձի և տեսական գիտելիքի համախմբման միջոցով: Համանման չափի, բարդության, ոլորտի</i></p>	<ul style="list-style-type: none"> • The form and frequency of external assessment; and • The qualifications and independence of the external assessor or assessment team, including any potential conflict of interest. <p>Interpretation:</p> <p><i>External assessments can be in the form of a full external assessment, or a self-assessment with independent external validation.</i></p> <p><i>A qualified assessor or assessment team demonstrates competence in two areas: the professional practice of internal auditing and the external assessment process. Competence can be demonstrated through a mixture of experience and theoretical learning. Experience gained in organizations of similar size, complexity, sector or industry,</i></p>



ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ	ATTRIBUTE STANDARDS
<p>կազմակերպություններում և տեխնիկական հարցերից ստացված փորձն ալելի արժեքավոր է, քան պակաս համապատասխան փորձը: Գնահատման թիմի դեպքում ոչ բոլոր անդամները կարող են ունենալ պահանջվող հմտությունները; թիմը, որպես ամբողջական միավոր, պետք է լինի որակավորված: Ներքին աուդիտի ղեկավարը կիրառում է մասնագիտական դատողություն, երբ գնահատում է, թե արդյոք գնահատողը կամ գնահատող թիմը դրսևորում են որակավորման բավարար հմտություն:</p>	<p>and technical issues is more valuable than less relevant experience. In the case of an assessment team, not all members of the team need to have all the competencies; it is the team as a whole that is qualified. The chief audit executive uses professional judgment when assessing whether an assessor or assessment team demonstrates sufficient competence to be qualified.</p>
<p>Անկախ գնահատողը կամ գնահատող թիմը չպետք է ունենա իրական կամ ակնհայտ շահերի բախում և չպետք է լինի այն կազմակերպության մասը (կամ գործի հսկողության տակ), որին պատկանում է ներքին աուդիտի գործառույթը:</p> <p>1320 – Որակի երաշխավորման և բարելավման ծրագրի հաշվետվողականություն</p> <p>Ներքին աուդիտի ղեկավարը պետք է գործադիր ղեկավարությանն ու խորհրդին ներկայացնի Որակի երաշխավորման և բարելավման ծրագրի արդյունքները:</p> <p>Մեկնաբանություն</p> <p>Որակի երաշխավորման և բարելավման ծրագրի արդյունքների ներկայացման ձևը, բովանդակությունը և հաճախականությունը</p>	<p>An independent assessor or assessment team means not having either a real or an apparent conflict of interest and not being a part of, or under the control of, the organization to which the internal audit activity belongs.</p> <p>1320 – Reporting on the Quality Assurance and Improvement Program</p> <p>The chief audit executive must communicate the results of the quality assurance and improvement program to senior management and the board.</p> <p>Interpretation:</p> <p>The form, content, and frequency of communicating the results of the quality assurance and improvement program is established through</p>



ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ	ATTRIBUTE STANDARDS
<p>որոշվում է գործադիր ղեկավարության և խորհրդի հետ քննարկումների միջոցով և հաշվի է առնում ներքին աուդիտի գործառույթի և ներքին աուդիտի ղեկավարի պարտականությունները, որոնք նշված են ներքին աուդիտի կանոնադրության մեջ: Ներքին աուդիտի սահմանմանը, էթիկայի կանոններին և Սպանդարտներին համապատասխանությունը ցուցադրելու նպատակով արտաքին և պարբերական ներքին</p>	<p><i>discussions with senior management and the board and considers the responsibilities of the internal audit activity and chief audit executive as contained in the internal audit charter. To demonstrate conformance with the Definition of Internal Auditing, the Code of Ethics, and the Standards, the results of external and periodic internal assessments are communicated upon completion of such assessments and the results of ongoing monitoring are communicated</i></p>
<p>գնահատումների արդյունքները ներկայացվում են նման հանձնառություններն իրականացնելուց հետո, իսկ շարունակական մոնիթորինգի արդյունքները՝ առնվազն տարին մեկ: Արդյունքները ներառում են գնահատողի կամ գնահատող խմբի եզրակացությունը՝ համապատասխանության աստիճանի վերաբերյալ:</p> <p>1321 – “Համապատասխանում է ներքին աուդիտի մասնագիտական գործունեության միջազգային ստանդարտներին” արտահայտության օգտագործում</p> <p>Ներքին աուդիտի ղեկավարը կարող է նշել, որ ներքին աուդիտի գործառույթն իրականացվում է Ներքին աուդիտի մասնագիտական գործունեության միջազգային ստանդարտներին համապատասխան միայն այն դեպքում, երբ որակի</p>	<p><i>at least annually. The results include the assessor’s or assessment team’s evaluation with respect to the degree of conformance.</i></p> <p>1321 – Use of “Conforms with the International Standards for the Professional Practice of Internal Auditing”</p> <p>The chief audit executive may state that the internal audit activity conforms with the <i>International Standards for the Professional Practice of Internal Auditing</i> only if the results of the quality assurance and improvement program support this statement.</p>



ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ	ATTRIBUTE STANDARDS
<p>Երաշխավորման և բարելավման ծրագրի արդյունքները հաստատում են այդ արտահայտությունը:</p>	
<p>Մեկնաբանություն</p> <p><i>Ներքին աուդիտի գործառույթը համապատասխանում է Ստանդարտներին այն դեպքում, երբ ապահովում է Ներքին աուդիտի սահմանմամբ, Էթիկայի կանոններով և</i></p>	<p>Interpretation:</p> <p><i>The internal audit activity conforms with the Standards when it achieves the outcomes described in the Definition of Internal Auditing, Code of Ethics, and Standards. The results of the quality assurance</i></p>
<p><i>Ստանդարտներով նկարագրվող արդյունքները: Որակի երաշխավորման և բարելավման ծրագրի արդյունքները ներառում են թե՛ ներքին և թե՛ արտաքին գնահատումների արդյունքները: Բոլոր ներքին աուդիտի ծառայությունները պետք է ունենան ներքին գնահատումների արդյունքներ: Առնվազն հինգ տարի գոյություն ունեցող ներքին աուդիտի գործունեությունը պետք է ունենա նաև արտաքին գնահատումների արդյունքներ:</i></p> <p>1322 – Անհամապատասխանության բացահայտում</p> <p>Երբ Ներքին աուդիտի սահմանմամբ, Էթիկայի կանոններին կամ Ստանդարտներին անհամապատասխանությունը ազդում է ներքին աուդիտի գործառույթի ընդհանուր շրջանակի կամ գործունեության վրա, ներքին աուդիտի ղեկավարը պետք է</p>	<p><i>and improvement program include the results of both internal and external assessments. All internal audit activities will have the results of internal assessments. Internal audit activities in existence for at least five years will also have the results of external assessments.</i></p> <p>1322 – Disclosure of Nonconformance</p> <p>When nonconformance with the Definition of Internal Auditing, the Code of Ethics, or the <i>Standards</i> impacts the overall scope or operation of the internal audit activity, the chief audit executive must disclose the nonconformance and the impact to senior management and the board.</p>



ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ	ATTRIBUTE STANDARDS
տեղեկացնի անհամապատասխանության և դրա ազդեցության մասին գործադիր ղեկավարությանն ու խորհրդին:	



ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ	PERFORMANCE STANDARDS
<p>2000 – Ներքին աուդիտի գործառույթի կառավարում</p> <p>Ներքին աուդիտի ղեկավարը պետք է արդյունավետ կերպով կառավարի ներքին աուդիտի գործառույթը՝ երաշխավորելով, որ այն արժեք է ստեղծում կազմակերպության համար:</p> <p>Մեկնաբանություն</p> <p>Ներքին աուդիտի գործառույթն արդյունավետորեն կառավարվում է երբ.</p> <ul style="list-style-type: none"> • ներքին աուդիտի աշխատանքների արդյունքներով իրագործվում են ներքին աուդիտի կանոնադրությամբ սահմանված նպատակներն ու պարտականությունները, • ներքին աուդիտի գործառույթը համապատասխանում է Ներքին աուդիտի սահմանմանն ու Ստանդարտներին, • ներքին աուդիտի մաս կազմող անձինք դրսևորում են Ստանդարտներին և Էթիկայի կանոններին համապատասխան վարքագիծ: <p>Ներքին աուդիտի գործառույթն արժեք է ավելացնում կազմակերպությանը (և նրա շահագրգիռ անձանց), երբ փրամադրում է անկողմնակալ և համապատասխան հավաստիացում, ինչպես նաև խթանում է կորպորատիվ կառավարման, ռիսկերի կառավարման և հսկողության գործընթացների արդյունավետությունն ու նպատակայնությունը:</p>	<p>2000 – Managing the Internal Audit Activity</p> <p>The chief audit executive must effectively manage the internal audit activity to ensure it adds value to the organization.</p> <p>Interpretation:</p> <p><i>The internal audit activity is effectively managed when:</i></p> <ul style="list-style-type: none"> • <i>The results of the internal audit activity’s work achieve the purpose and responsibility included in the internal audit charter;</i> • <i>The internal audit activity conforms with the Definition of Internal Auditing and the Standards; and</i> • <i>The individuals who are part of the internal audit activity demonstrate conformance with the Code of Ethics and the Standards.</i> <p><i>The internal audit activity adds value to the organization (and its stakeholders) when it provides objective and relevant assurance, and contributes to the effectiveness and efficiency of governance, risk management, and control processes.</i></p>

Թարգմանությունը բոլոր էական առումներով համապատասխանում է բնօրինակին և հրապարակված է հեղինակային իրավունքի տիրապետող Ներքին Աուդիտորների Ինստիտուտի (247 Maitland Avenue, Altamonte Springs, Florida 32701-4201, USA) թույլտվությամբ:



ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ	PERFORMANCE STANDARDS
<p>2010 – Պլանավորում</p> <p>Ներքին աուդիտի ղեկավարը պետք է կազմի ռիսկերի վրա հիմնված ծրագիր կազմակերպության նպատակներին համահունչ ներքին աուդիտի գործունեության գերակայությունները որոշելու համար:</p> <p>Մեկնաբանություն</p> <p>Ներքին աուդիտի ղեկավարը պատասխանատու է ռիսկերի վրա հիմնված ծրագրի մշակման համար: Ներքին աուդիտի ղեկավարը հաշվի է առնում կազմակերպության ռիսկերի կառավարման հայեցակարգը՝ ներառյալ ղեկավարության կողմից կազմակերպության փարբեր գործողությունների կամ հատվածների համար սահմանված ռիսկի ախորժակի մակարդակները: Համապատասխան հայեցակարգի բացակայության դեպքում, ներքին աուդիտի ղեկավարն օգտագործում է ռիսկերի վերաբերյալ իր դատողությունները՝ հաշվի առնելով գործադիր ղեկավարության կամ խորհրդի կարծիքը: Ներքին աուդիտի ղեկավարն անհրաժեշտության դեպքում պետք է վերանայի և ճշգրտի ծրագիրը՝ ի պատասխան կազմակերպության գործունեության, ռիսկերի, գործառնությունների, ծրագրերի, համակարգերի և հսկողությունների փոփոխության:</p>	<p>2010 – Planning</p> <p>The chief audit executive must establish a risk-based plan to determine the priorities of the internal audit activity, consistent with the organization’s goals.</p> <p>Interpretation:</p> <p><i>The chief audit executive is responsible for developing a risk-based plan. The chief audit executive takes into account the organization’s risk management framework, including using risk appetite levels set by management for the different activities or parts of the organization. If a framework does not exist, the chief audit executive uses his/her own judgment of risks after consideration of input from senior management and the board. The chief audit executive must review and adjust the plan, as necessary, in response to changes in the organization’s business, risks, operations, programs, systems, and controls.</i></p>

Թարգմանությունը բոլոր էական առումներով համապատասխանում է բնօրինակին և հրապարակված է հեղինակային իրավունքի տիրապետող Ներքին Աուդիտորների Ինստիտուտի (247 Maitland Avenue, Altamonte Springs, Florida 32701-4201, USA) թույլտվությամբ:



ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՍՏԱՆԴԱՐՆԵՐ	PERFORMANCE STANDARDS
<p>2010.Հ1 – Ներքին աուդիտի հանձնառությունների ծրագիրը պետք է հիմնված լինի առնվազն տարին մեկ իրականացվող փաստաթղթավորված ռիսկերի գնահատման վրա: Գործընթացում պետք է հաշվի առնվի գործադիր ղեկավարության ու խորհրդի ներդրումը:</p> <p>2010.Հ2 – Ներքին աուդիտի ղեկավարը՝ ներքին աուդիտի կարծիքներ կամ այլ եզրակացություններ կազմելիս, պետք է հասկանա և հաշվի առնի գործադիր ղեկավարության, խորհրդի և այլ շահագրգիռ անձանց ակնկալիքները:</p> <p>2010.Խ1 – Ներքին աուդիտի ղեկավարը անհրաժեշտ է ի նկատի ունենա խորհրդատվական հանձնառությունների ընդունման հնարավորությունը, եթե դրանք թույլ են տալիս բարելավել ռիսկերի կառավարման գործընթացը, կազմակերպության գործառնությունները և ստեղծել հավելյալ արժեք: Ընդունված հանձնառությունները պետք է ներառվեն ծրագրում:</p> <p>2020 – Ներկայացում և հաստատում</p> <p>Ներքին աուդիտի ղեկավարը գործադիր ղեկավարության ու խորհրդի քննարկմանն ու հաստատմանը պետք է ներկայացնի ներքին աուդիտի գործունեության ծրագիրը և ռեսուրսների նկատմամբ պահանջարկը՝ այդ թվում նաև էական միջանկյալ</p>	<p>2010.A1 – The internal audit activity’s plan of engagements must be based on a documented risk assessment, undertaken at least annually. The input of senior management and the board must be considered in this process.</p> <p>2010.A2 – The chief audit executive must identify and consider the expectations of senior management, the board, and other stakeholders for internal audit opinions and other conclusions.</p> <p>2010.C1 – The chief audit executive should consider accepting proposed consulting engagements based on the engagement’s potential to improve management of risks, add value, and improve the organization’s operations. Accepted engagements must be included in the plan.</p> <p>2020 – Communication and Approval</p> <p>The chief audit executive must communicate the internal audit activity’s plans and resource requirements, including significant interim changes, to senior management and the board for review and</p>



ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ	PERFORMANCE STANDARDS
<p>փոփոխությունները: Ներքին աուդիտի ղեկավարը պետք է ներկայացնի նաև ռեսուրսների սահմանափակման հետևանքները:</p> <p>2030 – Ռեսուրսների կառավարում</p> <p>Ներքին աուդիտի ղեկավարը պետք է հավաստիանա, որ ներքին աուդիտի ռեսուրսները համարժեք են, բավարար և են կիրառվում արդյունավետորեն՝ հաստատված ծրագիրն իրականացնելու համար:</p> <p>Մեկնաբանություն</p> <p><i>Համարժեքությունը գիտելիքի, հմտության և այլ ունակությունների ամբողջությունն է, որն անհրաժեշտ է ծրագիրն իրականացնելու համար: Բավարարությունը ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների քանակն է: Ռեսուրսների շահագործումը արդյունավետ է համարվում այն դեպքում, երբ դրանց օգտագործումը օպտիմալացնում է հաստատված ծրագրի իրականացումը:</i></p> <p>2040 – Քաղաքականություն և ընթացակարգեր</p> <p>Ներքին աուդիտի ղեկավարը պետք է մշակի ներքին աուդիտի գործունեությունն ուղղորդող քաղաքականություն և ընթացակարգեր:</p>	<p>approval. The chief audit executive must also communicate the impact of resource limitations.</p> <p>2030 – Resource Management</p> <p>The chief audit executive must ensure that internal audit resources are appropriate, sufficient, and effectively deployed to achieve the approved plan.</p> <p>Interpretation:</p> <p><i>Appropriate refers to the mix of knowledge, skills, and other competencies needed to perform the plan. Sufficient refers to the quantity of resources needed to accomplish the plan. Resources are effectively deployed when they are used in a way that optimizes the achievement of the approved plan.</i></p> <p>2040 – Policies and Procedures</p> <p>The chief audit executive must establish policies and procedures to guide the internal audit activity.</p>

Թարգմանությունը բոլոր էական առումներով համապատասխանում է բնօրինակին և հրապարակված է հեղինակային իրավունքի տիրապետող Ներքին Աուդիտորների Ինստիտուտի (247 Maitland Avenue, Altamonte Springs, Florida 32701-4201, USA) թույլտվությամբ:



ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՍՏԱՆԴԱՐՆԵՐ	PERFORMANCE STANDARDS
<p>Մեկնաբանություն</p> <p><i>Քաղաքականության և ընթացակարգերի ձևն ու բովանդակությունը կախված են ներքին աուդիտի գործունեության չափից ու կառուցվածքից, ինչպես նաև աշխատանքների բարդությունից:</i></p> <p>2050 – Կոորդինացում</p> <p>Ներքին աուդիտի ղեկավարը անհրաժեշտ է տեղեկատվություն փոխանակի և կոորդինացնի գործունեությունը հավաստիացման կամ խորհրդատվական ծառայություններ մատուցող այլ ներքին կամ արտաքին ընկերությունների հետ՝ գործողությունների կրկնությունը նվազեցնելու և աշխատանքների պատշաճ ընդգրկվածություն ապահովելու նպատակով:</p> <p>2060 – Հաշվետվողականություն գործադիր ղեկավարությանն ու խորհրդին</p> <p>Ներքին աուդիտի ղեկավարը պարբերաբար պետք է գործադիր ղեկավարությանն ու խորհրդին ներկայացնի ներքին աուդիտի նպատակը, իրավասությունները, պարտականությունները և ծրագրի կատարման ընթացքը: Հաշվետվողականությունը պետք է ներառի նաև էական ռիսկերին և հսկողությանը վերաբերող խնդիրները՝ ներառյալ խարդախության ռիսկերը, կորպորատիվ</p>	<p>Interpretation:</p> <p><i>The form and content of policies and procedures are dependent upon the size and structure of the internal audit activity and the complexity of its work.</i></p> <p>2050 – Coordination</p> <p>The chief audit executive should share information and coordinate activities with other internal and external providers of assurance and consulting services to ensure proper coverage and minimize duplication of efforts.</p> <p>2060 – Reporting to Senior Management and the Board</p> <p>The chief audit executive must report periodically to senior management and the board on the internal audit activity’s purpose, authority, responsibility, and performance relative to its plan. Reporting must also include significant risk exposures and control issues, including fraud risks, governance issues, and other matters needed or requested by senior management and the board.</p>

Թարգմանությունը բոլոր էական առումներով համապատասխանում է բնօրինակին և հրապարակված է հեղինակային իրավունքի տիրապետող Ներքին Աուդիտորների Ինստիտուտի (247 Maitland Avenue, Altamonte Springs, Florida 32701-4201, USA) թույլտվությամբ:



ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ	PERFORMANCE STANDARDS
<p>կառավարման խնդիրները և գործադիր ղեկավարության ու խորհրդի կողմից պահանջվող այլ հարցերը:</p> <p>Մեկնաբանություն</p> <p><i>Հաշվետվողականության հաճախականությունն ու բովանդակությունը որոշվում է գործադիր ղեկավարության և խորհրդի հետ քննարկումների միջոցով և կախված է ներկայացվող տեղեկատվության ներկայացման կարևորությունից և գործադիր ղեկավարության ու խորհրդի կողմից ձեռնարկվող պատասխան միջոցառումների հրատապությունից:</i></p> <p>2070 – Արտաքին ծառայություն մատուցող և կազմակերպության պատասխանատվությունը ներքին աուդիտի համար</p> <p>Երբ ներքին աուդիտն իրականացվում է արտաքին ծառայություն մատուցողի կողմից, վերջինս պետք է տեղեկացնի կազմակերպությանը արդյունավետ ներքին աուդիտի գործունեություն ունենալու պարտականության մասին:</p> <p>Մեկնաբանություն</p> <p><i>Վերոնշյալ պատասխանատվությունը ներկայացվում է որակի երաշխավորման և բարելավման ծրագրի միջոցով, որը</i></p>	<p>Interpretation:</p> <p><i>The frequency and content of reporting are determined in discussion with senior management and the board and depend on the importance of the information to be communicated and the urgency of the related actions to be taken by senior management or the board.</i></p> <p>2070 – External Service Provider and Organizational Responsibility for Internal Auditing</p> <p>When an external service provider serves as the internal audit activity, the provider must make the organization aware that the organization has the responsibility for maintaining an effective internal audit activity.</p> <p>Interpretation</p>

Թարգմանությունը բոլոր էական առումներով համապատասխանում է բնօրինակին և հրապարակված է հեղինակային իրավունքի տիրապետող Ներքին Աուդիտորների Ինստիտուտի (247 Maitland Avenue, Altamonte Springs, Florida 32701-4201, USA) թույլտվությամբ:



ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ	PERFORMANCE STANDARDS
<p><i>գնահատում է համապատասխանությունը Ներքին աուդիտի սահմանմանը, էթիկայի կանոններին և Սկանդարտներին:</i></p> <p>2100 – Աշխատանքի էությունը</p> <p>Ներքին աուդիտի գործառույթը պետք է գնահատի և նպաստի կորպորատիվ կառավարման, ռիսկերի կառավարման և հսկողության գործընթացների բարելավմանը՝ կիրառելով համակարգված և հետևողական մոտեցում:</p> <p>2110 – Կորպորատիվ կառավարում</p> <p>Ներքին աուդիտի գործառույթը պետք է գնահատի և համապատասխան առաջարկներ ներկայացնի կորպորատիվ կառավարման գործընթացները բարելավելու ուղղությամբ հետևյալ նպատակներն իրագործելիս.</p> <ul style="list-style-type: none"> • կազմակերպության ներսում համապատասխան էթիկայի և արժեքների խթանում, • կազմակերպական արդյունավետ կառավարման և հաշվետվողականության ապահովում, • ռիսկերի և հսկողության վերաբերյալ տեղեկատվության ներկայացում կազմակերպության համապատասխան հատվածներին և 	<p><i>This responsibility is demonstrated through the quality assurance and improvement program which assesses conformance with the Definition of Internal Auditing, the Code of Ethics, and the Standards.</i></p> <p>2100 – Nature of Work</p> <p>The internal audit activity must evaluate and contribute to the improvement of governance, risk management, and control processes using a systematic and disciplined approach.</p> <p>2110 – Governance</p> <p>The internal audit activity must assess and make appropriate recommendations for improving the governance process in its accomplishment of the following objectives:</p> <ul style="list-style-type: none"> • Promoting appropriate ethics and values within the organization; • Ensuring effective organizational performance management and accountability; • Communicating risk and control information to appropriate areas of the organization; and

Թարգմանությունը բոլոր էական առումներով համապատասխանում է բնօրինակին և հրապարակված է հեղինակային իրավունքի տիրապետող Ներքին Աուդիտորների Ինստիտուտի (247 Maitland Avenue, Altamonte Springs, Florida 32701-4201, USA) թույլտվությամբ:



ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ	PERFORMANCE STANDARDS
<ul style="list-style-type: none"> խորհրդի, արտաքին ու ներքին աուդիտորների և ղեկավարության գործողությունների կոորդինացում և տեղեկատվության տարածում: <p>2110.Հ1 – Ներքին աուդիտի գործառույթը պետք է գնահատի կազմակերպության էթիկայի հետ կապված նպատակների, ծրագրերի և գործունեության կառուցվածքը, իրականացումը և արդյունավետությունը:</p> <p>2110.Հ2 – Ներքին աուդիտի գործառույթը պետք է գնահատի թե արդյոք կազմակերպության տեղեկատվական տեխնոլոգիաների կառավարումը համահունչ է կազմակերպության ռազմավարությանն ու նպատակներին:</p> <p>2120 – Ռիսկերի կառավարում</p> <p>Ներքին աուդիտի գործառույթը պետք է գնահատի ռիսկերի կառավարման գործընթացի արդյունավետությունը և նպաստի դրա բարելավմանը:</p> <p>Մեկնաբանություն</p> <p><i>Ռիսկերի կառավարման գործընթացների արդյունավետության որոշումը հիմնված է դատողության վրա, որը ձևավորվում է</i></p>	<ul style="list-style-type: none"> Coordinating the activities of and communicating information among the board, external and internal auditors, and management. <p>2110.A1 – The internal audit activity must evaluate the design, implementation, and effectiveness of the organization’s ethics-related objectives, programs, and activities.</p> <p>2110.A2 – The internal audit activity must assess whether the information technology governance of the organization supports the organization’s strategies and objectives.</p> <p>2120 – Risk Management</p> <p>The internal audit activity must evaluate the effectiveness and contribute to the improvement of risk management processes.</p> <p>Interpretation:</p> <p><i>Determining whether risk management processes are effective is a judgment resulting from the internal auditor’s assessment that:</i></p>



ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՍՏԱՆԴԱՐՆԵՐ	PERFORMANCE STANDARDS
<p>Ներքին աուդիտորի կողմից հեղուկալ դրույթների գնահատման արդյունքում.</p> <ul style="list-style-type: none"> • կազմակերպության նպատակները համահունչ են կազմակերպության առաքելությանը ու նպաստում են դրան, • էական ռիսկերը բացահայտված են և գնահատված, • ռիսկերին ի պատասխան ընտրված համապատասխան արձագանքները համահունչ են կազմակերպության ռիսկի ախորժակին և • ռիսկի վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը ստացված ու ներկայացված է ժամանակին՝ հնարավորություն տալով անձնակազմին, ղեկավարությանն ու խորհրդին իրականացնել իրենց պարտականությունները: <p>Ներքին աուդիտի գործառույթը կարող է հավաքել այս գնահատմանն օժանդակող տեղեկատվությունը մի քանի հանձնառությունների ընթացքում: Այս հանձնառությունների արդյունքների համատեղ ուսումնասիրումը թույլ է տալիս հասկանալ կազմակերպության ռիսկերի կառավարման գործընթացներն ու դրանց արդյունավետությունը:</p>	<ul style="list-style-type: none"> • <i>Organizational objectives support and align with the organization’s mission;</i> • <i>Significant risks are identified and assessed;</i> • <i>Appropriate risk responses are selected that align risks with the organization’s risk appetite; and</i> • <i>Relevant risk information is captured and communicated in a timely manner across the organization, enabling staff, management, and the board to carry out their responsibilities.</i> <p><i>The internal audit activity may gather the information to support this assessment during multiple engagements. The results of these engagements, when viewed together, provide an understanding of the organization’s risk management processes and their effectiveness.</i></p>



ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ	PERFORMANCE STANDARDS
<p><i>Ռիսկերի կառավարման գործընթացները վերահսկվում են կառավարման շարունակական գործողությունների, առանձին գնահատումների կամ միաժամանակ երկուսի միջոցով:</i></p> <p>2120.Հ1 – Ներքին աուդիտի գործառույթը պետք է գնահատի կազմակերպության կառավարման, գործառնությունների և տեղեկատվական տեխնոլոգիաների՝ ռիսկերի ենթարկվածությունը հետևյալ ոլորտներում.</p> <ul style="list-style-type: none"> • կազմակերպության ռազմավարական նպատակների իրականացում, • ֆինանսական և գործառնական տեղեկատվության արժանահավատություն ու ամբողջականություն, • գործառնությունների ու ծրագրերի արդյունավետություն և նպատակայնություն, • ակտիվների անվտանգ պահպանություն և • համապատասխանություն օրենքներին, կանոնակարգերին, քաղաքականությանը, կարգերին ու պայմանագրերին: <p>2120.Հ2 – Ներքին աուդիտի գործառույթը պետք է գնահատի խարդախության ի հայտ գալու հավանականությունը և կազմակերպության կողմից խարդախության ռիսկերի կառավարումը:</p>	<p><i>Risk management processes are monitored through ongoing management activities, separate evaluations, or both.</i></p> <p>2120.A1 – The internal audit activity must evaluate risk exposures relating to the organization’s governance, operations, and information systems regarding the:</p> <ul style="list-style-type: none"> • Achievement of the organization’s strategic objectives; • Reliability and integrity of financial and operational information; • Effectiveness and efficiency of operations and programs; • Safeguarding of assets; and • Compliance with laws, regulations, policies, procedures, and contracts. <p>2120.A2 – The internal audit activity must evaluate the potential for the occurrence of fraud and how the organization manages fraud risk.</p>



ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ	PERFORMANCE STANDARDS
<p>2120.Խ1 – Խորհրդատվական հանձնառությունների ժամանակ ներքին աուդիտորները պետք է դիտարկեն հանձնառության նպատակների իրականացման հետ կապված ռիսկերը և զգոն լինեն այլ էական ռիսկերի գոյության նկատմամբ:</p> <p>2120.Խ2 – Ներքին աուդիտորները խորհրդատվական հանձնառությունների ընթացքում ռիսկերի վերաբերյալ ձեռք բերած գիտելիքները պետք է կիրառեն կազմակերպության ռիսկերի կառավարման գործընթացների գնահատման ժամանակ:</p> <p>2120.Խ3 – Ներքին աուդիտորները պետք է զերծ մնան ռիսկերի կառավարման միջոցով որևէ կառավարման պատասխանատվություն ստանձնելուց՝ ղեկավարության կողմից ռիսկերի կառավարման գործընթացների սահմանմանը կամ բարելավմանը աջակցելու ընթացքում:</p> <p>2130 – Հսկողություն</p> <p>Ներքին աուդիտի գործառույթը պետք է աջակցի կազմակերպությանն արդյունավետ հսկողություններ ունենալու գործընթացում՝ դրանց արդյունավետության ու նպատակայնության գնահատման և դրանց շարունակական բարելավմանը նպաստելու միջոցով:</p>	<p>2120.C1 – During consulting engagements, internal auditors must address risk consistent with the engagement’s objectives and be alert to the existence of other significant risks.</p> <p>2120.C2 – Internal auditors must incorporate knowledge of risks gained from consulting engagements into their evaluation of the organization’s risk management processes.</p> <p>2120.C3 – When assisting management in establishing or improving risk management processes, internal auditors must refrain from assuming any management responsibility by actually managing risks.</p> <p>2130 – Control</p> <p>The internal audit activity must assist the organization in maintaining effective controls by evaluating their effectiveness and efficiency and by promoting continuous improvement.</p>



ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ	PERFORMANCE STANDARDS
<p>2130.Հ1 – Ներքին աուդիտի գործառույթը պետք է գնահատի կազմակերպության կառավարման, գործառնությունների և տեղեկատվական համակարգերում ռիսկերին արձագանքող հսկողությունների համարժեքությունն ու արդյունավետությունը հետևյալ ոլորտներում.</p> <ul style="list-style-type: none">• կազմակերպության ռազմավարական նպատակների իրականացում,• ֆինանսական և գործառնական տեղեկատվության արժանահավատություն ու ամբողջականություն,• գործառնությունների ու ծրագրերի արդյունավետություն և նպատակայնություն,• ակտիվների անվտանգ պահպանություն և• համապատասխանություն օրենքներին, կանոնակարգերին, քաղաքականությանը, կարգերին ու պայմանագրերին: <p>2130.Խ1 – Ներքին աուդիտորները խորհրդատվական հանձնառությունների ընթացքում հսկողությունների վերաբերյալ ձեռք բերված գիտելիքները պետք է կիրառեն կազմակերպության հսկողական գործընթացների գնահատման ժամանակ:</p>	<p>2130.A1 – The internal audit activity must evaluate the adequacy and effectiveness of controls in responding to risks within the organization’s governance, operations, and information systems regarding the:</p> <ul style="list-style-type: none">• Achievement of the organization’s strategic objectives;• Reliability and integrity of financial and operational information;• Effectiveness and efficiency of operations and programs;• Safeguarding of assets; and• Compliance with laws, regulations, policies, procedures, and contracts. <p>2130.C1 – Internal auditors must incorporate knowledge of controls gained from consulting engagements into evaluation of the organization’s control processes.</p>



ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ	PERFORMANCE STANDARDS
<p>2200 – Հանձնառության պլանավորում</p> <p>Ներքին աուդիտորները յուրաքանչյուր հանձնառության համար պետք է մշակեն և փաստաթղթավորեն ծրագիր, որը պետք է ներառի հանձնառության նպատակները, շրջանակը, տևողությունը և ռեսուրսների բաշխումը:</p> <p>2201 – Պլանավորման նկատառումներ</p> <p>Հանձնառություն պլանավորելիս ներքին աուդիտորները պետք է հաշվի առնեն.</p> <ul style="list-style-type: none"> • ուսումնասիրվող գործունեության նպատակները և միջոցները, որոնցով հսկվում է տվյալ գործունեության իրականացումը, • գործունեության նպատակների, ռեսուրսների և գործառնությունների հետ կապված էական ռիսկերը և միջոցները, որոնցով ռիսկի հավանական ազդեցությունը պահվում է ընդունելի սահմաններում, • գործունեության կառավարման, ռիսկերի կառավարման և հսկողական գործընթացների համարժեքությունն ու արդյունավետությունը՝ համապատասխան մոդելի հետ համեմատած, 	<p>2200 – Engagement Planning</p> <p>Internal auditors must develop and document a plan for each engagement, including the engagement’s objectives, scope, timing, and resource allocations.</p> <p>2201 – Planning Considerations</p> <p>In planning the engagement, internal auditors must consider:</p> <ul style="list-style-type: none"> • The objectives of the activity being reviewed and the means by which the activity controls its performance; • The significant risks to the activity, its objectives, resources, and operations and the means by which the potential impact of risk is kept to an acceptable level; • The adequacy and effectiveness of the activity’s governance, risk management, and control processes compared to a relevant framework or model; and



<p align="center">ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ</p>	<p align="center">PERFORMANCE STANDARDS</p>
<ul style="list-style-type: none"> գործունեության կառավարման, ռիսկերի կառավարման և հսկողական գործընթացները զգալիորեն բարելավելու հնարավորությունները: <p>2201.Հ1 – Կազմակերպությունից դուրս գտնվող կողմերի համար հանձնառություն պլանավորելիս ներքին աուդիտորները պետք է գրավոր կերպով համաձայնեցնեն նպատակները, շրջանակը, համապատասխան պատասխանատվությունները և այլ ակնկալիքները՝ ներառյալ հանձնառության արդյունքների բաշխման և հանձնառության փաստաթղթերի հասանելիության նկատմամբ սահմանափակումները:</p> <p>2201.Խ1 – Ներքին աուդիտորները խորհրդատվական հանձնառության հաճախորդների հետ պետք է համաձայնեցնեն նպատակները, շրջանակը, համապատասխան պարտականությունները և հաճախորդի այլ ակնկալիքները: Էական հանձնառությունների դեպքում վերոնշյալ համաձայնեցումը պետք է փաստաթղթավորվի:</p> <p>2210 – Հանձնառության նպատակներ</p> <p>Յուրաքանչյուր հանձնառության համար պետք է սահմանվեն նպատակներ:</p>	<ul style="list-style-type: none"> The opportunities for making significant improvements to the activity’s governance, risk management, and control processes. <p>2201.A1 – When planning an engagement for parties outside the organization, internal auditors must establish a written understanding with them about objectives, scope, respective responsibilities, and other expectations, including restrictions on distribution of the results of the engagement and access to engagement records.</p> <p>2201.C1 – Internal auditors must establish an understanding with consulting engagement clients about objectives, scope, respective responsibilities, and other client expectations. For significant engagements, this understanding must be documented.</p> <p>2210 – Engagement Objectives</p> <p>Objectives must be established for each engagement.</p>



ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ	PERFORMANCE STANDARDS
<p>2210.Հ1 – Ներքին աուդիտորները պետք է իրականացնեն ուսումնասիրվող գործունեության ռիսկերի նախնական գնահատում: Հանձնառության նպատակները պետք է արտացոլեն վերոնշյալ գնահատման արդյունքները:</p> <p>2210.Հ2 – Ներքին աուդիտորները հանձնառության նպատակները մշակելիս պետք է հաշվի առնեն էական սխալների, խարդախության, անհամապատասխանության հավանականությունը:</p> <p>2210.Հ3 – Կորպորատիվ կառավարման, ռիսկերի կառավարման ու հսկողությունների գնահատման համար անհրաժեշտ են համարժեք չափանիշներ: Ներքին աուդիտորները պետք է համոզվեն ղեկավարության և/կամ խորհրդի կողմից սահմանված համարժեք չափանիշների առկայություն մեջ՝ նպատակների իրականացումը գնահատելու համար: Համարժեքության դեպքում ներքին աուդիտորները պետք է կիրառեն վերոնշյալ չափանիշներն իրենց գնահատումներում: Անհամարժեքության դեպքում ներքին աուդիտորները պետք է աշխատեն ղեկավարության և/կամ խորհրդի հետ՝ համապատասխան գնահատման չափանիշներ մշակելու համար:</p>	<p>2210.A1 – Internal auditors must conduct a preliminary assessment of the risks relevant to the activity under review. Engagement objectives must reflect the results of this assessment.</p> <p>2210.A2 – Internal auditors must consider the probability of significant errors, fraud, noncompliance, and other exposures when developing the engagement objectives.</p> <p>2210.A3 – Adequate criteria are needed to evaluate governance, risk management, and controls. Internal auditors must ascertain the extent to which management and/or the board has established adequate criteria to determine whether objectives and goals have been accomplished. If adequate, internal auditors must use such criteria in their evaluation. If inadequate, internal auditors must work with management and/or the board to develop appropriate evaluation criteria.</p>



ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ	PERFORMANCE STANDARDS
<p>2210.Խ1 – Խորհրդատվական հանձնառության նպատակները պետք է հասցեագրեն կորպորատիվ կառավարման, ռիսկերի կառավարման և հսկողական գործընթացներն այնքանով, որքանով համաձայնեցված են հաճախորդների հետ:</p> <p>2210.Խ2 – Խորհրդատվական հանձնառության նպատակները պետք է համապատասխանեն կազմակերպության արժեքներին, ռազմավարությանն ու նպատակներին:</p> <p>2220 – Հանձնառության շրջանակ</p> <p>Սահմանված շրջանակը պետք է բավարար լինի հանձնառության նպատակներին հասնելու համար:</p> <p>2220.Հ1 – Հանձնառության շրջանակը պետք է ներառի համապատասխան համակարգերը, փաստաթղթերը, անձնակազմն ու ֆիզիկական գույքը՝ ներառյալ երրորդ անձանց հսկողության տակ գտնվողները:</p> <p>2220.Հ2 – Եթե հավաստիացման հանձնառության ընթացքում առաջանում են խորհրդատվության էական հնարավորություններ, անհրաժեշտ է հատուկ գրավոր պայմանավորվածություններ նպատակների, շրջանակի, համապատասխան պարտականությունների և այլ ակնկալիքների շուրջ, իսկ խորհրդատվական հանձնառության արդյունքները պետք է</p>	<p>2210.C1 – Consulting engagement objectives must address governance, risk management, and control processes to the extent agreed upon with the client.</p> <p>2210.C2 – Consulting engagement objectives must be consistent with the organization's values, strategies, and objectives.</p> <p>2220 – Engagement Scope</p> <p>The established scope must be sufficient to achieve the objectives of the engagement.</p> <p>2220.A1 – The scope of the engagement must include consideration of relevant systems, records, personnel, and physical properties, including those under the control of third parties.</p> <p>2220.A2 – If significant consulting opportunities arise during an assurance engagement, a specific written understanding as to the objectives, scope, respective responsibilities, and other expectations should be reached and the results of the consulting engagement communicated in accordance with consulting standards.</p>



ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ	PERFORMANCE STANDARDS
<p>ներկայացվեն խորհրդատվական ստանդարտներին համապատասխան:</p> <p>2220.Խ1 – Խորհրդատվական հանձնառություններ իրականացնելիս ներքին աուդիտորները պետք է համոզվեն, որ հանձնառության շրջանակը բավարար է համաձայնեցված նպատակներին հասնելու համար: Եթե ներքին աուդիտորները հանձնառության ընթացքում շրջանակի հետ կապված վերապահումներ են անում, վերջիններս պետք է քննարկվեն հաճախորդի հետ՝ հանձնառությունը շարունակելու հարցը որոշելու համար:</p> <p>2220.Խ2 – Խորհրդատվական հանձնառության ընթացքում ներքին աուդիտորները պետք է հաշվի առնեն հանձնառության նպատակներին համահունչ հսկողությունները և զգոն լինեն էական հսկողական խնդիրների առկայության նկատմամբ:</p> <p>2230 – Հանձնառության ռեսուրսների բաշխում</p> <p>Ներքին աուդիտորները պետք է որոշեն հանձնառության նպատակներին հասնելու համար անհրաժեշտ և բավարար ռեսուրսները՝ գնահատելով հանձնառության բնույթը և բարդությունը, ժամանակային սահմանափակումները և հասանելի ռեսուրսները:</p>	<p>2220.C1 – In performing consulting engagements, internal auditors must ensure that the scope of the engagement is sufficient to address the agreed-upon objectives. If internal auditors develop reservations about the scope during the engagement, these reservations must be discussed with the client to determine whether to continue with the engagement.</p> <p>2220.C2 – During consulting engagements, internal auditors must address controls consistent with the engagement’s objectives and be alert to significant control issues.</p> <p>2230 – Engagement Resource Allocation</p> <p>Internal auditors must determine appropriate and sufficient resources to achieve engagement objectives based on an evaluation of the nature and complexity of each engagement, time constraints, and available resources.</p>

Թարգմանությունը բոլոր էական առումներով համապատասխանում է բնօրինակին և հրապարակված է հեղինակային իրավունքի տիրապետող Ներքին Աուդիտորների Ինստիտուտի (247 Maitland Avenue, Altamonte Springs, Florida 32701-4201, USA) թույլտվությամբ:



ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ	PERFORMANCE STANDARDS
<p>2240 – Հանձնառության աշխատանքային ծրագիր</p> <p>Ներքին աուդիտորները պետք է մշակեն և փաստաթղթավորեն աշխատանքային ծրագրեր, որոնք կնպաստեն հանձնառության նպատակների իրականացմանը:</p> <p>2240.Շ1 – Աշխատանքային ծրագրերը պետք է ներառեն հանձնառության ընթացքում տեղեկատվության բացահայտման, վերլուծության, գնահատման և փաստաթղթավորման ընթացակարգերը: Աշխատանքային ծրագիրը պետք է հաստատվի նախքան իրականացումը, իսկ դրա ճշգրտումները՝ ժամանակին:</p> <p>2240.Խ1 – Խորհրդատվական հանձնառությունների աշխատանքային ծրագրերը կարող են տարբերվել ձևով և բովանդակությամբ՝ կախված հանձնառության բնույթից:</p> <p>2300 – Հանձնառության իրականացում</p> <p>Ներքին աուդիտորները հանձնառության նպատակներն իրագործելու համար պետք է բացահայտեն, վերլուծեն, գնահատեն և փաստաթղթավորեն բավարար տեղեկատվություն:</p>	<p>2240 – Engagement Work Program</p> <p>Internal auditors must develop and document work programs that achieve the engagement objectives.</p> <p>2240.A1 – Work programs must include the procedures for identifying, analyzing, evaluating, and documenting information during the engagement. The work program must be approved prior to its implementation, and any adjustments approved promptly.</p> <p>2240.C1 – Work programs for consulting engagements may vary in form and content depending upon the nature of the engagement.</p> <p>2300 – Performing the Engagement</p> <p>Internal auditors must identify, analyze, evaluate, and document sufficient information to achieve the engagement’s objectives.</p>



ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ	PERFORMANCE STANDARDS
<p>2310 – Տեղեկատվության բացահայտում</p> <p>Հանձնառության նպատակներն իրագործելու համար ներքին աուդիտորները պետք է բացահայտեն բավարար, արժանահավատ, էական և օգտակար տեղեկատվություն:</p> <p>Մեկնաբանություն</p> <p><i>Բավարար տեղեկատվությունը փաստացի, համապատասխան և համոզիչ տեղեկատվությունն է, որը կօգնի խելամիտ, տեղեկացված անձին գալու նույն եզրահանգումների, ինչ և աուդիտորը: Արժանահավատ տեղեկատվությունը հանձնառության համապատասխան հնարքների կիրառմամբ ստացվող լավագույն հասանելի տեղեկատվությունն է: Էական տեղեկատվությունը հիմնավորում է հանձնառության դիտարկումներն ու առաջարկները և համահունչ է հանձնառության նպատակներին: Օգտակար տեղեկատվությունն օգնում է կազմակերպության իրագործել իր նպատակները:</i></p>	<p>2310 – Identifying Information</p> <p>Internal auditors must identify sufficient, reliable, relevant, and useful information to achieve the engagement’s objectives.</p> <p>Interpretation:</p> <p><i>Sufficient information is factual, adequate, and convincing so that a prudent, informed person would reach the same conclusions as the auditor. Reliable information is the best attainable information through the use of appropriate engagement techniques. Relevant information supports engagement observations and recommendations and is consistent with the objectives for the engagement. Useful information helps the organization meet its goals.</i></p>
<p>2320 – Վերլուծություն և գնահատում</p> <p>Ներքին աուդիտորները պետք է կազմեն իրենց եզրակացություններն ու հանձնառության արդյունքները</p>	<p>2320 – Analysis and Evaluation</p> <p>Internal auditors must base conclusions and engagement results on appropriate analysis and evaluations.</p>

Թարգմանությունը բոլոր էական առումներով համապատասխանում է բնօրինակին և հրապարակված է հեղինակային իրավունքի տիրապետող Ներքին Աուդիտորների Ինստիտուտի (247 Maitland Avenue, Altamonte Springs, Florida 32701-4201, USA) թույլտվությամբ:



ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ	PERFORMANCE STANDARDS
<p>համապատասխան վերլուծությունների և գնահատումների հիման վրա:</p> <p>2330 – Տեղեկատվության փաստաթղթավորում</p> <p>Ներքին աուդիտորները պետք է փաստաթղթավորեն էական տեղեկատվությունը՝ եզրակացություններն ու հանձնառության արդյունքները հիմնավորելու համար:</p> <p>2330.Հ1 – Ներքին աուդիտի ղեկավարը պետք է հսկի հանձնառության փաստաթղթերին հասանելիությունը: Ներքին աուդիտի ղեկավարը պետք է ստանա գործադիր ղեկավարության և/կամ իրավաբանական ծառայության հավանությունը նախքան վերոնշյալ փաստաթղթերն արտաքին կողմերին տրամադրելը:</p> <p>2330.Հ2 – Ներքին աուդիտի ղեկավարը պետք է մշակի հանձնառության փաստաթղթերի պահպանման պահանջներ՝ անկախ այն միջավայրից, որտեղ պահվում են փաստաթղթերը : Պահպանման այս պահանջները պետք է համահունչ լինեն կազմակերպության ուղեցույցներին և կանոնակարգող կամ այլ պահանջներին:</p> <p>2330.Խ1 – Ներքին աուդիտի ղեկավարը պետք է մշակի խորհրդատվական հանձնառության փաստաթղթերի պահպանության, ինչպես նաև դրանք արտաքին ու ներքին</p>	<p>2330 – Documenting Information</p> <p>Internal auditors must document relevant information to support the conclusions and engagement results.</p> <p>2330.A1 – The chief audit executive must control access to engagement records. The chief audit executive must obtain the approval of senior management and/or legal counsel prior to releasing such records to external parties, as appropriate.</p> <p>2330.A2 – The chief audit executive must develop retention requirements for engagement records, regardless of the medium in which each record is stored. These retention requirements must be consistent with the organization’s guidelines and any pertinent regulatory or other requirements.</p> <p>2330.C1 – The chief audit executive must develop policies governing the custody and retention of consulting engagement records, as well as their release to internal and external parties. These policies must</p>

Թարգմանությունը բոլոր էական առումներով համապատասխանում է բնօրինակին և հրապարակված է հեղինակային իրավունքի տիրապետող Ներքին Աուդիտորների Ինստիտուտի (247 Maitland Avenue, Altamonte Springs, Florida 32701-4201, USA) թույլտվությամբ:



ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ	PERFORMANCE STANDARDS
<p>կողմերին տրամադրելու քաղաքականություն: Այս քաղաքականությունը պետք է համահունչ լինի կազմակերպության ուղեցույցներին և կանոնակարգող կամ այլ պահանջներին:</p> <p>2340 – Հանձնառության վերահսկում</p> <p>Հանձնառությունները պետք է պատշաճ կերպով վերահսկվեն՝ նպատակների իրականացման, որակի երաշխավորման և անձնակազմի զարգացման ապահովման համար:</p> <p>Մեկնաբանություն</p> <p><i>Պահանջվող հսկողության չափը կախված է ներքին աուդիտորների փորձառությունից ու հմտությունից, ինչպես նաև հանձնառության բարդությունից: Ներքին աուդիտի ղեկավարն ընդհանուր առմամբ պատասխանատու է հանձնառության վերահսկման համար՝ անկախ նրանից այն իրականացվում է ներքին աուդիտի կողմից կամ վերջինիս համար. սակայն վերանայումն իրականացնելու համար կարող է նաև նշանակել համապատասխան փորձ ունեցող անդամներին: Վերահսկման համապատասխան ապացույցները փաստաթղթավորվում են և պահվում:</i></p>	<p>be consistent with the organization’s guidelines and any pertinent regulatory or other requirements.</p> <p>2340 – Engagement Supervision</p> <p>Engagements must be properly supervised to ensure objectives are achieved, quality is assured, and staff is developed.</p> <p>Interpretation:</p> <p><i>The extent of supervision required will depend on the proficiency and experience of internal auditors and the complexity of the engagement. The chief audit executive has overall responsibility for supervising the engagement, whether performed by or for the internal audit activity, but may designate appropriately experienced members of the internal audit activity to perform the review. Appropriate evidence of supervision is documented and retained.</i></p>



ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ	PERFORMANCE STANDARDS
<p>2400 – Արդյունքների ներկայացում</p> <p>Ներքին աուդիտորները պետք է ներկայացնեն հանձնառությունների արդյունքները:</p> <p>2410 – Ներկայացման չափանիշներ</p> <p>Ներկայացումը պետք է ներառի հանձնառության նպատակներն ու շրջանակը, ինչպես նաև համապատասխան եզրակացությունները, առաջարկները և գործողությունների ծրագիրը:</p> <p>2410.Հ1 – Հանձնառության արդյունքների վերջնական ներկայացումը, անհրաժեշտության դեպքում, պետք է ներառի ներքին աուդիտորների կարծիքը և/կամ եզրակացությունները: Ներկայացնելիս կարծիքը կամ եզրակացությունը պետք է հաշվի առնի գործադիր ղեկավարության, խորհրդի և այլ շահագրգիռ անձանց ակնկալիքները և պետք է հիմնավորված լինի բավարար, արժանահավատ, էական և օգտակար տեղեկատվությամբ:</p> <p>Մեկնաբանություն</p> <p><i>Հանձնառության մակարդակում կարծիքները կարող են լինել արդյունքների վերաբերյալ գնահատումներ, եզրակացություններ կամ այլ նկարագրություններ: Նման հանձնառությունը կարող է լինել առանձին գործընթացի, ռիսկի կամ բիզնես միավորի</i></p>	<p>2400 – Communicating Results</p> <p>Internal auditors must communicate the results of engagements.</p> <p>2410 – Criteria for Communicating</p> <p>Communications must include the engagement’s objectives and scope as well as applicable conclusions, recommendations, and action plans.</p> <p>2410.A1 - Final communication of engagement results must, where appropriate, contain the internal auditors’ opinion and/or conclusions. When issued, an opinion or conclusion must take account of the expectations of senior management, the board, and other stakeholders and must be supported by sufficient, reliable, relevant, and useful information.</p> <p>Interpretation:</p> <p><i>Opinions at the engagement level may be ratings, conclusions, or other descriptions of the results. Such an engagement may be in relation to controls around a specific process, risk, or business unit.</i></p>

Թարգմանությունը բոլոր էական առումներով համապատասխանում է բնօրինակին և հրապարակված է հեղինակային իրավունքի տիրապետող Ներքին Աուդիտորների Ինստիտուտի (247 Maitland Avenue, Altamonte Springs, Florida 32701-4201, USA) թույլտվությամբ:



ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՍՏԱՆԴԱՐՆԵՐ	PERFORMANCE STANDARDS
<p><i>հսկողությունների վերաբերյալ: Նման եզրակացությունների հանգեցիկ պետք է հաշվի առնել հանձնառության արդյունքներն ու դրանց կարևորությունը:</i></p> <p>2410.Ը2 – Ցանկալի է, որ ներքին աուդիտորները հանձնառության արդյունքները ներկայացնելիս մատնանշեն բավարար հաղորդակցության առկայությունը:</p> <p>2410.Ը3 – Հանձնառության արդյունքները կազմակերպությունից դուրս երրորդ անձանց տրամադրելու դեպքում պետք է ներկայացվեն արդյունքների տարածման և օգտագործման վերաբերյալ սահմանափակումները:</p> <p>2410.Խ1 – Խորհրդատվական հանձնառության ընթացքի ու արդյունքների ներկայացումը կարող է տարբերվել ձևով ու բովանդակությամբ՝ կախված հանձնառության բնույթից ու հաճախորդի պահանջներից:</p> <p>2420 – Ներկայացման որակ</p> <p>Ներկայացումը պետք է լինի ճշգրիտ, օբյեկտիվ, պարզ, հստակ, կառուցողական, լիարժեք և ժամանակին:</p>	<p><i>The formulation of such opinions requires consideration of the engagement results and their significance.</i></p> <p>2410.A2 – Internal auditors are encouraged to acknowledge satisfactory performance in engagement communications.</p> <p>2410.A3 – When releasing engagement results to parties outside the organization, the communication must include limitations on distribution and use of the results.</p> <p>2410.C1 – Communication of the progress and results of consulting engagements will vary in form and content depending upon the nature of the engagement and the needs of the client.</p> <p>2420 – Quality of Communications</p> <p>Communications must be accurate, objective, clear, concise, constructive, complete, and timely.</p>



ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ	PERFORMANCE STANDARDS
<p>Մեկնաբանություն</p> <p>Ճշգրիտ ներկայացումները զերծ են սխալներից ու խեղաթյուրումներից և հիմնված են փաստերի վրա: Օբյեկտիվ ներկայացումները անաչառ են, անկողմնակալ և հանդիսանում են բոլոր համապատասխան փաստերի և իրավիճակների հաշվեկշռված ու ազնիվ գնահատման արդյունք: Պարզ ներկայացումները դյուրընկալ են և տրամաբանական, խուսափում են տեխնիկական տերմինաբանության ավելորդ օգտագործումից՝ միևնույն ժամանակ տրամադրում են համապատասխան ողջ էական տեղեկատվությունը: Հստակ ներկայացումը պետք է լինի դիպուկ և խուսափի ավելորդ նախաբանների, անտեղի մանրամասնությունների, ավելորդությունների և բառերի օգտագործումից: Կառուցողական ներկայացումը օգտակար է հանձնառության հաճախորդին և կազմակերպությանը և անհրաժեշտության դեպքում նպաստում է բարելավումներին: Ամբողջական ներկայացումը բաց չի թողնում ոչինչ, ինչ կարող է անհրաժեշտ լինել թիրախային լսարանին և ներառում է առաջարկներն ու եզրակացությունները հիմնավորող ողջ էական ու նշանակալի տեղեկատվությունն ու դիտարկումները: Ժամանակին ներկայացումները նպատակահարմար են ու տեղին և, կախված խնդրի կարևորությունից, թույլ են տալիս ղեկավարությանը ձեռնարկել համապատասխան շտկող գործողություններ:</p>	<p>Interpretation:</p> <p><i>Accurate communications are free from errors and distortions and are faithful to the underlying facts. Objective communications are fair, impartial, and unbiased and are the result of a fair-minded and balanced assessment of all relevant facts and circumstances. Clear communications are easily understood and logical, avoiding unnecessary technical language and providing all significant and relevant information. Concise communications are to the point and avoid unnecessary elaboration, superfluous detail, redundancy, and wordiness. Constructive communications are helpful to the engagement client and the organization and lead to improvements where needed. Complete communications lack nothing that is essential to the target audience and include all significant and relevant information and observations to support recommendations and conclusions. Timely communications are opportune and expedient, depending on the significance of the issue, allowing management to take appropriate corrective action.</i></p>

Թարգմանությունը բոլոր էական առումներով համապատասխանում է բնօրինակին և հրապարակված է հեղինակային իրավունքի տիրապետող Ներքին Աուդիտորների Ինստիտուտի (247 Maitland Avenue, Altamonte Springs, Florida 32701-4201, USA) թույլտվությամբ:



ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ	PERFORMANCE STANDARDS
<p>2421 – Սխալներ ու բացթողումներ</p> <p>Եթե վերջնական ներկայացումը պարունակում է էական սխալներ կամ բացթողումներ, ապա ներքին աուդիտի ղեկավարը պետք է ներկայացնի ուղղված տեղեկատվությունը սկզբնական հաշվետվությունը ստացած բոլոր կողմերին:</p> <p>2430 – “Իրականացվել է Ներքին աուդիտի մասնագիտական գործունեության միջազգային ստանդարտներին համապատասխան” արտահայտության կիրառում</p> <p>Ներքին աուդիտորները կարող են նշել, որ իրենց հանձնառությունները “իրականացվում են Ներքին աուդիտի մասնագիտական գործունեության միջազգային ստանդարտներին համապատասխան”, միայն եթե որակի երաշխավորման և բարելավման ծրագրի արդյունքները հիմնավորում են այդ արտահայտությունը:</p> <p>2431 – Հանձնառության անհամապատասխանության բացահայտում</p> <p>Երբ Ներքին աուդիտի սահմանման, էթիկայի կանոնների կամ Ստանդարտների հետ անհամապատասխանությունն ազդում է</p>	<p>2421 – Errors and Omissions</p> <p>If a final communication contains a significant error or omission, the chief audit executive must communicate corrected information to all parties who received the original communication.</p> <p>2430 – Use of “Conducted in Conformance with the International Standards for the Professional Practice of Internal Auditing”</p> <p>Internal auditors may report that their engagements are “conducted in conformance with the <i>International Standards for the Professional Practice of Internal Auditing</i>”, only if the results of the quality assurance and improvement program support the statement.</p> <p>2431 – Engagement Disclosure of Nonconformance</p> <p>When nonconformance with the Definition of Internal Auditing, the Code of Ethics or the <i>Standards</i> impacts a specific engagement, communication of the results must disclose the:</p>

Թարգմանությունը բոլոր էական առումներով համապատասխանում է բնօրինակին և հրապարակված է հեղինակային իրավունքի տիրապետող Ներքին Աուդիտորների Ինստիտուտի (247 Maitland Avenue, Altamonte Springs, Florida 32701-4201, USA) թույլտվությամբ:



ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ	PERFORMANCE STANDARDS
<p>առանձին հանձնառության վրա, ապա արդյունքների ներկայացումը պետք է բացահայտի.</p> <ul style="list-style-type: none"> • Էթիկայի կանոնների կամ Ստանդարտի(ների) սկզբունքը կամ կանոնը, որի հետ արձանագրվել է ամբողջական անհամապատասխանությունը, • անհամապատասխանության պատճառը(ները) և • անհամապատասխանության ազդեցությունը հանձնառության և ներկայացված արդյունքների վրա: <p>2440 – Արդյունքների տրամադրում</p> <p>Ներքին աուդիտի ղեկավարը պետք է տրամադրի արդյունքները համապատասխան անձանց:</p> <p>Մեկնաբանություն</p> <p><i>Ներքին աուդիտի ղեկավարը պատասխանատու է հանձնառության վերջնական ծանուցման վերանայման ու հաստատման, ինչպես նաև ստացողների ցուցակի և տրամադրման ձևի որոշման համար նախքան դրա թողարկումը: Երբ ներքին աուդիտի ղեկավարը վերոնշյալ իրավասություններով լիազորում է այլոց, նա, այնուամենայնիվ, պահպանում է վերջնական պատասխանատվությունը:</i></p>	<ul style="list-style-type: none"> • Principle or rule of conduct of the Code of Ethics or <i>Standard(s)</i> with which full conformance was not achieved; • Reason(s) for nonconformance; and • Impact of nonconformance on the engagement and the communicated engagement results. <p>2440 – Disseminating Results</p> <p>The chief audit executive must communicate results to the appropriate parties.</p> <p>Interpretation:</p> <p><i>The chief audit executive is responsible for reviewing and approving the final engagement communication before issuance and for deciding to whom and how it will be disseminated. When the chief audit executive delegates these duties, he or she retains overall responsibility.</i></p>

Թարգմանությունը բոլոր էական առումներով համապատասխանում է բնօրինակին և հրապարակված է հեղինակային իրավունքի տիրապետող Ներքին Աուդիտորների Ինստիտուտի (247 Maitland Avenue, Altamonte Springs, Florida 32701-4201, USA) թույլտվությամբ:



ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՍՏԱՆԴԱՐՆԵՐ	PERFORMANCE STANDARDS
<p>2440.Հ1 – Ներքին աուդիտի ղեկավարը պատասխանատու է վերջնական արդյունքներն այն անձանց ներկայացնելու համար, ովքեր կարող են երաշխավորել, որ դրանց կհատկացվի բավարար ուշադրություն:</p> <p>2440.Հ2 – Եթե այլ բան նախատեսված չէ իրավական, օրենսդրական կամ կանոնակարգող պահանջներով, նախքան կազմակերպությունից դուրս երրորդ անձանց արդյունքներ տրամադրելը ներքին աուդիտի ղեկավարը պետք է.</p> <ul style="list-style-type: none"> • գնահատի կազմակերպության հավանական ռիսկերը, • խորհրդակցի գործադիր ղեկավարության և/կամ իրավաբանական ծառայության հետ և • հսկի տրամադրման գործընթացը՝ սահմանափակելով արդյունքների օգտագործումը: <p>2440.Խ1 – Ներքին աուդիտի ղեկավարը պատասխանատու է խորհրդատվական հանձնառության վերջնական արդյունքները հաճախորդներին ներկայացնելու համար:</p> <p>2440.Խ2 – Խորհրդատվական հանձնառությունների ընթացքում կարող են առաջանալ կորպորատիվ կառավարման, ռիսկերի կառավարման և հսկողության խնդիրներ: Այն դեպքում, երբ այս</p>	<p>2440.A1 – The chief audit executive is responsible for communicating the final results to parties who can ensure that the results are given due consideration.</p> <p>2440.A2 – If not otherwise mandated by legal, statutory, or regulatory requirements, prior to releasing results to parties outside the organization the chief audit executive must:</p> <ul style="list-style-type: none"> • Assess the potential risk to the organization; • Consult with senior management and/or legal counsel as appropriate; and • Control dissemination by restricting the use of the results. <p>2440.C1 – The chief audit executive is responsible for communicating the final results of consulting engagements to clients.</p> <p>2440.C2 – During consulting engagements, governance, risk management, and control issues may be identified. Whenever these issues are significant to the organization, they must be communicated to senior management and the board.</p>

Թարգմանությունը բոլոր էական առումներով համապատասխանում է բնօրինակին և հրապարակված է հեղինակային իրավունքի տիրապետող Ներքին Աուդիտորների Ինստիտուտի (247 Maitland Avenue, Altamonte Springs, Florida 32701-4201, USA) թույլտվությամբ:



ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ	PERFORMANCE STANDARDS
<p>խնդիրներն էական են կազմակերպության համար, դրանք պետք է ներկայացվեն գործադիր ղեկավարությանն ու խորհրդին:</p> <p>2450 – Ընդհանուր եզրակացություններ</p> <p>Երբ ընդհանուր եզրակացությունը ներկայացվում է, այն պետք է հաշվի առնի գործադիր ղեկավարության, խորհրդի և այլ շահագրգիռ անձանց ակնկալիքները և պետք է հիմնավորված լինի բավարար, արժանահավատ, էական և օգտակար տեղեկատվությամբ:</p> <p>Մեկնաբանություն</p> <p><i>Ներկայացումը պետք է բացահայտի.</i></p> <ul style="list-style-type: none"> • շրջանակը՝ ներառյալ այն ժամանակահատվածը, որին վերաբերում է եզրակացությունը, • շրջանակի սահմանափակումները, • հաշվի առնի բոլոր համապատասխան նախագծերը՝ ներառյալ հավաստիացման ծառայություններ մատուցողների աշխատանքի վրա հիմնվելը, • ռիսկի կամ հսկողության հայեցակարգը կամ չափանիշը, որը հիմք է ծառայել ընդհանուր եզրակացության ձևավորման համար և 	<p>2450 – Overall Opinions</p> <p>When an overall opinion is issued, it must take into account the expectations of senior management, the board, and other stakeholders and must be supported by sufficient, reliable, relevant, and useful information.</p> <p>Interpretation:</p> <p><i>The communication will identify:</i></p> <ul style="list-style-type: none"> • <i>The scope, including the time period to which the opinion pertains;</i> • <i>Scope limitations;</i> • <i>Consideration of all related projects including the reliance on other assurance providers;</i> • <i>The risk or control framework or other criteria used as a basis for the overall opinion; and</i>



ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ	PERFORMANCE STANDARDS
<ul style="list-style-type: none"> • ստացված ընդհանուր եզրակացությունը, կարծիքը կամ դատողությունը: <p>Անբավարար ընդհանուր եզրակացության պատճառները պետք է նշված լինեն:</p> <p>2500 – Առաջընթացի մոնիտորինգ</p> <p>Ներքին աուդիտի ղեկավարը պետք է ստեղծի և պահպանի ղեկավարությանը ներկայացված արդյունքների շտկման ուղղությամբ իրականացվող քայլերի հսկողության համակարգ:</p> <p>2500.C1 – Ներքին աուդիտի ղեկավարը պետք է ներդնի հետստուգման գործընթաց՝ հետևելու և համոզվելու համար, որ ղեկավարության գործողություններն արդյունավետորեն իրականացվել են կամ գործադիր ղեկավարությունն ընդունել է գործողություններ չձեռնարկելու ռիսկը:</p> <p>2500.Խ1 – Ներքին աուդիտի գործառույթը պետք է հետևի խորհրդատվական հանձնառության արդյունքների օգտագործմանը հաճախորդի հետ պայմանավորվածության համաձայն:</p>	<ul style="list-style-type: none"> • <i>The overall opinion, judgment, or conclusion reached.</i> <p><i>The reasons for an unfavorable overall opinion must be stated.</i></p> <p>2500 – Monitoring Progress</p> <p>The chief audit executive must establish and maintain a system to monitor the disposition of results communicated to management.</p> <p>2500.A1 – The chief audit executive must establish a follow-up process to monitor and ensure that management actions have been effectively implemented or that senior management has accepted the risk of not taking action.</p> <p>2500.C1 – The internal audit activity must monitor the disposition of results of consulting engagements to the extent agreed upon with the client.</p>



ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ	PERFORMANCE STANDARDS
<p>2600 – Ռիսկերի ընդունման վերաբերյալ իրազեկում</p> <p>Երբ ներքին աուդիտի ղեկավարը եզրակացնում է, որ ղեկավարությունն ընդունել է ռիսկի այնպիսի մակարդակ, որն անընդունելի է կազմակերպության համար, ապա նա պետք է հարցը քննարկի գործադիր ղեկավարության հետ: Եթե ներքին աուդիտի ղեկավարը որոշում է, որ հարցը չի լուծվել, ապա նա պետք է խնդիրը ներկայացնի խորհրդին:</p> <p>Մեկնաբանություն</p> <p><i>Ղեկավարության կողմից ընդունված ռիսկի բացահայտումը կարող է դիտարկվել հավաստիացման կամ խորհրդատվական հանձնառության միջոցով, հեղուկում նախկին հանձնառությունների արդյունքում ղեկավարության կողմից ձեռնարկված միջոցառումների ընթացքին կամ այլ կերպ: Ռիսկերի կառավարումը չի հանդիսանում Ներքին աուդիտի ղեկավարի պարտականությունը:</i></p>	<p>2600 – Communicating the Acceptance of Risks</p> <p>When the chief audit executive concludes that management has accepted a level of risk that may be unacceptable to the organization, the chief audit executive must discuss the matter with senior management. If the chief audit executive determines that the matter has not been resolved, the chief audit executive must communicate the matter to the board.</p> <p>Interpretation:</p> <p><i>The identification of risk accepted by management may be observed through an assurance or consulting engagement, monitoring progress on actions taken by management as a result of prior engagements, or other means. It is not the responsibility of the chief audit executive to resolve the risk.</i></p>



ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	GLOSSARY
<p>Արժեքի ավելացում</p> <p>Ներքին աուդիտի գործառույթը օգուտ է բերում կազմակերպությանը (և իր շահառուներին), երբ տրամադրում է անաչառ և պատշաճ հավաստիացում, և նպաստում է կորպորատիվ կառավարման, ռիսկերի կառավարման և հսկողության գործընթացների արդյունավետությանն ու նպատակայնությանը:</p> <p>Համարժեք հսկողություն</p> <p>Առկա է, երբ ղեկավարությունը պլանավորել և կազմակերպել է հսկողությունն այնպես, որ տրամադրում է խելամիտ հավաստիացում առ այն, որ կազմակերպության ռիսկերը կառավարվում են արդյունավետորեն և նպատակներն ու խնդիրներն իրականացվում են արդյունավետորեն ու խնայողաբար:</p> <p>Հավաստիացման ծառայություններ</p> <p>Փաստերի անաչառ ուսումնասիրում կազմակերպության կորպորատիվ կառավարման, ռիսկերի կառավարման և հսկողության գործընթացների վերաբերյալ անկախ գնահատման տրամադրման համար:</p> <p>Որպես օրինակ կարելի է նշել ֆինանսական, կատարողական, համապատասխանության, համակարգերի անվտանգության և պատշաճ ուսումնասիրության հանձնառությունները:</p>	<p>Add Value</p> <p>The internal audit activity adds value to the organization (and its stakeholders) when it provides objective and relevant assurance, and contributes to the effectiveness and efficiency of governance, risk management, and control processes.</p> <p>Adequate Control</p> <p>Present if management has planned and organized (designed) in a manner that provides reasonable assurance that the organization’s risks have been managed effectively and that the organization’s goals and objectives will be achieved efficiently and economically.</p> <p>Assurance Services</p> <p>An objective examination of evidence for the purpose of providing an independent assessment on governance, risk management, and control processes for the organization. Examples may include financial, performance, compliance, system security, and due diligence engagements.</p>



ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	GLOSSARY
<p>Խորհուրդ</p> <p>Կառավարման բարձրագույն մարմին, որն ունի կազմակերպության գործունեությունն ու կառավարումն ուղղորդելու և/կամ վերահսկելու պատասխանատվություն: Սովորաբար այն ներառում է տնօրենների անկախ խումբ (օրինակ՝ տնօրենների խորհուրդ, վերահսկիչ խորհուրդ, կառավարիչների կամ հոգաբարձուների խորհուրդ), սակայն եթե նման խումբ գոյություն չունի, ապա որպես «խորհուրդ» կարող է հանդես գալ կազմակերպության ղեկավարը, ինչպես նաև աուդիտ կոմիտեն, որին կառավարող մարմինը լիազորել է հստակ գործառույթներ:</p> <p>Կանոնադրություն</p> <p>Ներքին աուդիտի կանոնադրությունը ֆորմալ փաստաթուղթ է, որը սահմանվում է ներքին աուդիտի գործունեության նպատակը, իրավասություններն ու պատասխանատվությունը: Ներքին աուդիտի կանոնադրությունը սահմանում է ներքին աուդիտի դիրքը կազմակերպությունում, ինչպես նաև աուդիտի հանձնառության իրականացման համար տրամադրում հասանելիություն անհրաժեշտ փաստաթղթերին, անձնակազմին և ֆիզիկական գույքին, և սահմանում ներքին աուդիտի գործունեության շրջանակը:</p>	<p>Board</p> <p>The highest level of governing body charged with the responsibility to direct and/or oversee the activities and management of the organization. Typically, this includes an independent group of directors (e.g., a board of directors, a supervisory board, or a board of governors or trustees). If such a group does not exist, the “board” may refer to the head of the organization. “Board” may refer to an audit committee to which the governing body has delegated certain functions.</p> <p>Charter</p> <p>The internal audit charter is a formal document that defines the internal audit activity’s purpose, authority, and responsibility. The internal audit charter establishes the internal audit activity’s position within the organization; authorizes access to records, personnel, and physical properties relevant to the performance of engagements; and defines the scope of internal audit activities.</p>



ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	GLOSSARY
<p>Ներքին աուդիտի ղեկավար</p> <p>Ներքին աուդիտի ղեկավարը բարձրագույն պաշտոնատար անձն է, ով պատասխանատու է արդյունավետորեն կառավարելու ներքին աուդիտի գործառույթը՝ համապատասխան ներքին աուդիտի կանոնադրությանը, Ներքին աուդիտի սահմանմանը, Էթիկայի կանոններին և Ստանդարտներին: Ներքին աուդիտի ղեկավարը կամ նրան հաշվետու անձիք պետք է ունենան համապատասխան մասնագիտական հավաստագրեր և որակավորումներ: Ներքին աուդիտի ղեկավարի պաշտոնը (անվանումը) կազմակերպությունից կազմակերպություն կարող է տարբեր լինել:</p> <p>Էթիկայի կանոններ</p> <p>Ներքին աուդիտորների ինստիտուտի (ՆԱԻ) Էթիկայի կանոնները ներքին աուդիտի մասնագիտությանն ու գործունեությանը վերաբերող սկզբունքներ են և Վարքագծի կանոնները, որոնք նկարագրում են ներքին աուդիտորներից ակնկալվող վարքագիծը: Էթիկայի կանոնները վերաբերում են և կողմերին և սուբյեկտներին, որոնք մատուցում են ներքին աուդիտի ծառայություններ: Էթիկայի կանոնների նպատակն է ներքին աուդիտի գլոբալ մասնագիտության շրջանակներում տարածել էթիկական մշակույթը:</p>	<p>Chief Audit Executive</p> <p>Chief audit executive describes a person in a senior position responsible for effectively managing the internal audit activity in accordance with the internal audit charter and the Definition of Internal Auditing, the Code of Ethics, and the Standards. The chief audit executive or others reporting to the chief audit executive will have appropriate professional certifications and qualifications. The specific job title of the chief audit executive may vary across organizations.</p> <p>Code of Ethics</p> <p>The Code of Ethics of The Institute of Internal Auditors (IIA) are Principles relevant to the profession and practice of internal auditing, and Rules of Conduct that describe behavior expected of internal auditors. The Code of Ethics applies to both parties and entities that provide internal audit services. The purpose of the Code of Ethics is to promote an ethical culture in the global profession of internal auditing.</p>



ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	GLOSSARY
<p>Համապատասխանություն</p> <p>Համապատասխանություն քաղաքականությանը, ծրագրերին, ընթացակարգերին, օրենքներին, կանոնակարգերին, պայմանագրերին և այլ պահանջներին:</p> <p>Շահերի բախում</p> <p>Ցանկացած փոխհարաբերություն, որը չի բխում կազմակերպության շահերից կամ դիտվում որպես այդպիսին: Շահերի բախումը խաթարում է անձի՝ իր պարտավորություններն ու պարտականությունները անաչառ կատարելու ունակությունը:</p> <p>Խորհրդատվական ծառայություններ</p> <p>Խորհրդատվական և հաճախորդներին մատուցվող նմանատիպ ծառայություններ, որոնց բնույթը և շրջանակները համաձայնեցված են հաճախորդի հետ, որոնց նպատակն է արժեք ավելացնել և բարելավել կազմակերպության կորպորատիվ կառավարման, ռիսկերի կառավարման և հսկողության գործընթացներն առանց ներքին աուդիտորների կողմից կառավարչական պատասխանատվության ստանձնման: Օրինակներն են խորհրդատվությունը, աջակցությունը, միջնորդություն, վերապատրաստումը:</p> <p>Հսկողություն</p> <p>Ղեկավարության, խորհրդի կամ այլ անձանց կողմից իրականացվող ցանկացած գործողություն, որն ուղղված է ռիսկերի կառավարմանն և սահմանված նպատակների ու</p>	<p>Compliance</p> <p>Adherence to policies, plans, procedures, laws, regulations, contracts, or other requirements.</p> <p>Conflict of Interest</p> <p>Any relationship that is, or appears to be, not in the best interest of the organization. A conflict of interest would prejudice an individual’s ability to perform his or her duties and responsibilities objectively.</p> <p>Consulting Services</p> <p>Advisory and related client service activities, the nature and scope of which are agreed with the client, are intended to add value and improve an organization’s governance, risk management, and control processes without the internal auditor assuming management responsibility.</p> <p>Examples include counsel, advice, facilitation, and training.</p> <p>Control</p> <p>Any action taken by management, the board, and other parties to manage risk and increase the likelihood that established objectives and goals will be achieved. Management plans, organizes, and directs the</p>

Թարգմանությունը բոլոր էական աղումներով համապատասխանում է բնօրինակին և հրապարակված է հեղինակային իրավունքի տիրապետող Ներքին Աուդիտորների Ինստիտուտի (247 Maitland Avenue, Altamonte Springs, Florida 32701-4201, USA) թույլտվությամբ:



ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	GLOSSARY
<p>խնդիրների իրականացման հավանականության բարձրացմանը: Ղեկավարությունը պլանավորում, կազմակերպում և ուղղորդում է գործողությունները՝ տրամադրելով խելամիտ հավաստիացում, որ սահմանված նպատակներն ու խնդիրները կիրականացվեն:</p> <p>Հսկողության միջավայր</p> <p>Խորհրդի և ղեկավարության վերաբերմունքն ու գործողությունները կազմակերպությունում հսկողության կարևորության վերաբերյալ: Հսկողական միջավայրն ապահովում է ներքին հսկողության համակարգի առաջնային նպատակների իրականացման կարգն ու կառուցվածքը: Հսկողական միջավայրը ներառում է հետևյալ տարրերը.</p> <ul style="list-style-type: none"> • պարկեշտություն և բարոյական արժեքներ, • ղեկավարության փիլիսոփայություն և գործելակերպ, • կազմակերպական կառուցվածք, • իրավասությունների ու պարտականությունների վերագրում, • մարդկային ռեսուրսների քաղաքականություն ու փորձ, • անձնակազմի կարողություններ: <p>Հսկողական գործընթացներ</p> <p>Հսկողության հայեցակարգի մաս կազմող քաղաքականություն, ընթացակարգեր (ավտոմատ և մեխանիկական) և գործողություններ, որոնք նախագծված են և գործում են երաշխավորելու, որ ռիսկերը գտնվում են կազմակերպության կողմից ընդունելի մակարդակում:</p>	<p>performance of sufficient actions to provide reasonable assurance that objectives and goals will be achieved.</p> <p>Control Environment</p> <p>The attitude and actions of the board and management regarding the importance of control within the organization. The control environment provides the discipline and structure for the achievement of the primary objectives of the system of internal control. The control environment includes the following elements:</p> <ul style="list-style-type: none"> • Integrity and ethical values. • Management’s philosophy and operating style. • Organizational structure. • Assignment of authority and responsibility. • Human resource policies and practices. • Competence of personnel. <p>Control Processes</p> <p>The policies, procedures (both manual and automated), and activities that are part of a control framework, designed and operated to ensure that risks are contained within the level that an organization is willing to accept.</p>



ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	GLOSSARY
<p>Հանձնառություն</p> <p>Ներքին աուդիտի հատուկ հանձնառություն, առաջադրանք կամ վերանայման գործողություն, ինչպիսիք են ներքին աուդիտը, հսկողության ինքնագնահատումը, խարդախության ուսումնասիրումը կամ խորհրդատվությունը: Հանձնառությունը կարող է ներառել բազմաթիվ առաջադրանքներ կամ գործողություններ, որոնք ուղղված են հատուկ խմբի փոխկապակցված նպատակների իրականացմանը:</p> <p>Հանձնառության նպատակներ</p> <p>Ներքին աուդիտորների կողմից մշակված ձևակերպումներ, որոնք սահմանում են հանձնառության ակնկալվող արդյունքները:</p> <p>Հանձնառության կարծիք</p> <p>Ներքին աուդիտի հանձնառության գնահատական, եզրակացություն և/կամ արդյունքների այլ նկարագրություն, որը վերաբերում է հանձնառության նպատակների կամ շրջանակների խնդիրներին:</p> <p>Հանձնառության աշխատանքային ծրագիր</p> <p>Փաստաթուղթ, որում ներառված են հանձնառության ընթացքում կատարվելիք ընթացակարգերը, որոնք մշակված են հանձնառության ծրագիրն իրականացնելու համար:</p>	<p>Engagement</p> <p>A specific internal audit assignment, task, or review activity, such as an internal audit, control self-assessment review, fraud examination, or consultancy. An engagement may include multiple tasks or activities designed to accomplish a specific set of related objectives.</p> <p>Engagement Objectives</p> <p>Broad statements developed by internal auditors that define intended engagement accomplishments.</p> <p>Engagement Opinion</p> <p>The rating, conclusion, and/or other description of results of an individual internal audit engagement, relating to those aspects within the objectives and scope of the engagement.</p> <p>Engagement Work Program</p> <p>A document that lists the procedures to be followed during an engagement, designed to achieve the engagement plan.</p>



ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	GLOSSARY
<p>Արտաքին ծառայություն մատուցող</p> <p>Կազմակերպությունից դուրս գտնվող անձ կամ ընկերություն, որն ունի հատուկ գիտելիք, հմտություններ և փորձառություն որոշակի ոլորտի վերաբերյալ:</p> <p>Խարդախություն</p> <p>Ցանկացած ապօրինի գործողություն, որը բնութագրվում է որպես խաբեություն, ճշմարտության քողարկում կամ վստահության չարաշահում: Այս գործողությունները կախված չեն բռնության կամ ֆիզիկական ուժի սպառնալիքից: Խարդախություն իրականացվում է անձանց ու կազմակերպությունների կողմից՝ փող, գույք կամ ծառայություններ ստանալու, վճարումներից կամ ծառայությունների գրկվելուց խուսափելու, անձնական կամ աշխատանքային առավելություններ ձեռք բերելու համար:</p> <p>Կորպորատիվ Կառավարում</p> <p>Կազմակերպության նպատակների իրագործմանն ուղղված խորհրդի կողմից իրականացվող գործընթացների և կառուցվածքների համախումբ՝ կազմակերպության գործողությունների ուղղորդման, կառավարման, վերահսկման և տեղեկացման ուղղությամբ:</p>	<p>External Service Provider</p> <p>A person or firm outside of the organization that has special knowledge, skill, and experience in a particular discipline.</p> <p>Fraud</p> <p>Any illegal act characterized by deceit, concealment, or violation of trust. These acts are not dependent upon the threat of violence or physical force. Frauds are perpetrated by parties and organizations to obtain money, property, or services; to avoid payment or loss of services; or to secure personal or business advantage.</p> <p>Governance</p> <p>The combination of processes and structures implemented by the board to inform, direct, manage, and monitor the activities of the organization toward the achievement of its objectives.</p>



ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	GLOSSARY
<p>Խաթարում</p> <p>Կազմակերպական անկախության կամ անհատական անաչառության խաթարում, որը կարող է ներառել անձնական շահերի բախումը, շրջանակների, փաստաթղթերի, անձնակազմի ու գույքի հասանելիության և ռեսուրսների (ֆինանսավորման) սահմանափակումները:</p> <p>Անկախություն</p> <p>Ազատություն այնպիսի վիճակներից, որոնք խոչընդոտում են ներքին աուդիտին իրականացնել պարտականություններն անկողմնակալ կերպով:</p> <p>Տեղեկատվական տեխնոլոգիաների հսկողություններ</p> <p>Հսկողություններ, որոնք օժանդակում են բիզնեսի ղեկավարմանն ու կառավարմանը, ինչպես նաև ապահովում են ընդհանուր և տեխնիկական հսկողություններ տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքների նկատմամբ, ինչպիսիք են կիրառական ծրագրերը, տեղեկատվությունը, ենթակառուցվածքներն ու մարդիկ:</p> <p>Տեղեկատվական տեխնոլոգիաների կառավարում</p> <p>Կազմված է առաջնորդությունից, կազմակերպական կառուցվածքներից և գործընթացներից, որոնք երաշխավորում են, որ կազմակերպության տեղեկատվական տեխնոլոգիաներն</p>	<p>Impairment</p> <p>Impairment to organizational independence and individual objectivity may include personal conflict of interest, scope limitations, restrictions on access to records, personnel, and properties, and resource limitations (funding).</p> <p>Independence</p> <p>The freedom from conditions that threaten the ability of the internal audit activity to carry out internal audit responsibilities in an unbiased manner.</p> <p>Information Technology Controls</p> <p>Controls that support business management and governance as well as provide general and technical controls over information technology infrastructures such as applications, information, infrastructure, and people.</p> <p>Information Technology Governance</p> <p>Consists of the leadership, organizational structures, and processes that ensure that the enterprise’s information technology supports the organization’s strategies and objectives.</p>



ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	GLOSSARY
<p>աջակցում են կազմակերպության ռազմավարությանն ու նպատակներին:</p> <p>Ներքին աուդիտի գործառույթ</p> <p>Ստորաբաժանում, խորհրդատուների թիմ կամ այլ մասնագետներ, որոնք տրամադրում են անկախ, անաչառ հավաստիացման և խորհրդատվական ծառայություններ, որոնք նախագծված են արժեք ավելացնելու և բարելավելու կազմակերպության գործառնությունները: Ներքին աուդիտի գործառույթը օգնում է կազմակերպությանն իրագործել իր նպատակները՝ հետևողական մոտեցմամբ գնահատելով և բարելավելով կորպորատիվ կառավարման, ռիսկերի կառավարման և ներքին հսկողության գործընթացների արդյունավետությունը:</p> <p>Մասնագիտական գործունեության միջազգային հայեցակարգ</p> <p>Հայեցակարգ, որը կազմակերպում է ՆԱԻ կողմից հրապարակված հեղինակային ուղեցույցը: Հեղինակային ուղեցույցը բաղկացած է երկու բաժիններից (1) պարտադիր և (2) խիստ ցանկալի:</p> <p>Պետք է</p> <p>Ստանդարտները կիրառում են “պետք է” բառը անվերապահ պահանջ արտահայտելու նպատակով:</p>	<p>Internal Audit Activity</p> <p>A department, division, team of consultants, or other practitioner(s) that provides independent, objective assurance and consulting services designed to add value and improve an organization’s operations. The internal audit activity helps an organization accomplish its objectives by bringing a systematic, disciplined approach to evaluate and improve the effectiveness of governance, risk management and control processes.</p> <p>International Professional Practices Framework</p> <p>The conceptual framework that organizes the authoritative guidance promulgated by The IIA. Authoritative Guidance is comprised of two categories – (1) mandatory and (2) strongly recommended.</p> <p>Must</p> <p>The Standards use the word “must” to specify an unconditional requirement.</p>

Թարգմանությունը բոլոր էական առումներով համապատասխանում է բնօրինակին և հրապարակված է հեղինակային իրավունքի տիրապետող Ներքին Աուդիտորների Ինստիտուտի (247 Maitland Avenue, Altamonte Springs, Florida 32701-4201, USA) թույլտվությամբ:



ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	GLOSSARY
<p>Անաչառություն</p> <p>Անկողմնակալ վերաբերմունքի դրսևորում, որը թույլ կտա ներքին աուդիտորներին իրականացնել հանձնառությունն այնպես, որ նրանք վստահեն իրենց աշխատանքի արդյունքին, և որակի վերաբերյալ փոխզիջումներ չիրականացնեն:</p> <p>Անաչառությունը պահանջում է, որ ներքին աուդիտորները աուդիտի հարցերի շուրջ իրենց դատողությունները չստորադասեն այլ անձանց:</p> <p>Ընդհանուր եզրակացություն</p> <p>Ներքին աուդիտի ղեկավարի կողմից տրամադրվող գնահատականը, եզրահանգումը և/կամ արդյունքների այլ նկարագրությունը լայն իմաստով նկարագրում է կազմակերպության կորպորատիվ կառավարման, ռիսկերի կառավարման և/կամ հսկողության գործընթացները: Ընդհանուր եզրակացությունը ներքին աուդիտի ղեկավարի մասնագիտական դատողությունն է, որը հիմնված է որոշակի ժամանակահատվածում իրականացված մի շարք առանձին հանձնառությունների արդյունքների և այլ գործողությունների վրա:</p> <p>Ռիսկ</p> <p>Այն դեպքի ի հայտ գալու հավանականությունը, որը բացասական ազդեցություն կունենա նպատակների իրականացման վրա: Ռիսկը չափվում է ազդեցությամբ և հավանականությամբ:</p>	<p>Objectivity</p> <p>An unbiased mental attitude that allows internal auditors to perform engagements in such a manner that they believe in their work product and that no quality compromises are made.</p> <p>Objectivity requires that internal auditors do not subordinate their judgment on audit matters to others.</p> <p>Overall Opinion</p> <p>The rating, conclusion, and/or other description of results provided by the chief audit executive addressing, at a broad level, governance, risk management, and/or control processes of the organization. An overall opinion is the professional judgment of the chief audit executive based on the results of a number of individual engagements and other activities for a specific time interval.</p> <p>Risk</p> <p>The possibility of an event occurring that will have an impact on the achievement of objectives. Risk is measured in terms of impact and likelihood.</p>

Թարգմանությունը բոլոր էական առումներով համապատասխանում է բնօրինակին և հրապարակված է հեղինակային իրավունքի տիրապետող Ներքին Աուդիտորների Ինստիտուտի (247 Maitland Avenue, Altamonte Springs, Florida 32701-4201, USA) թույլտվությամբ:



ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	GLOSSARY
<p>Ռիսկի ախորժակ</p> <p>Ռիսկի այն մակարդակը, որը կազմակերպությունը պատրաստ է ընդունել:</p> <p>Ռիսկերի կառավարում</p> <p>Հավանական դեպքերի կամ իրավիճակների բացահայտման, գնահատման, կառավարման և հսկման գործընթաց, որն ուղղված է տրամադրելու խելամիտ հավաստիացում կազմակերպության նպատակների իրականացման վերաբերյալ:</p> <p>Անհրաժեշտ է</p> <p><i>Ստանդարտները</i> կիրառում են “անհրաժեշտ է” բառը, երբ համապատասխանությունն ակնկալվում է՝ բացառությամբ այն դեպքերի, երբ մասնագիտական դատողության կիրառման դեպքում իրավիճակներն արդարացնում են շեղումը:</p> <p>Կարևորություն</p> <p>Երևույթի հարաբերական կարևորությունը այն համատեքստում, որում այն հաշվի է առնվել՝ ներառյալ քանակական և որակական գործոնները, ինչպիսիք են էությունը/բնույթը, ուժգնությունը, հետևանքը, կարևորությունը, ազդեցությունը:</p> <p>Մասնագիտական դատողությունն օգնում է ներքին աուդիտորներին նպատակների կարևորության համատեքստում երևույթների էականությունը գնահատելիս:</p>	<p>Risk Appetite</p> <p>The level of risk that an organization is willing to accept.</p> <p>Risk Management</p> <p>A process to identify, assess, manage, and control potential events or situations to provide reasonable assurance regarding the achievement of the organization’s objectives.</p> <p>Should</p> <p>The Standards use the word “should” where conformance is expected unless, when applying professional judgment, circumstances justify deviation.</p> <p>Significance</p> <p>The relative importance of a matter within the context in which it is being considered, including quantitative and qualitative factors, such as magnitude, nature, effect, relevance, and impact.</p> <p>Professional judgment assists internal auditors when evaluating the significance of matters within the context of the relevant objectives.</p>



ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	GLOSSARY
<p>Ստանդարտ</p> <p>Ներքին աուդիտի ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված մասնագիտական չափորոշիչներ, որոնք սահմանում են ներքին աուդիտի գործունեության իրականացման և ներքին աուդիտի աշխատանքի գնահատման պահանջները:</p> <p>Աուդիտի տեխնոլոգիական միջոցներ</p> <p>Ցանկացած ավտոմատացված աուդիտորական գործիք, ինչպիսիք են ընդհանրացված աուդիտորական ծրագրերը, թեստային տվյալների գեներատորները, ավտոմատացված աուդիտորական ծրագրերը, մասնագիտացված աուդիտորական գործիքները և համակարգչային աուդիտորական հնարքները (CAATs):</p>	<p>Standard</p> <p>A professional pronouncement promulgated by the Internal Audit Standards Board that delineates the requirements for performing a broad range of internal audit activities, and for evaluating internal audit performance.</p> <p>Technology-based Audit Techniques</p> <p>Any automated audit tool, such as generalized audit software, test data generators, computerized audit programs, specialized audit utilities, and computer-assisted audit techniques (CAATs).</p>